
Մարինե Հակոբյան

Տեղեկատվություն ստանալու
իրավունք.

կրթություն, զբաղվածություն, աշխատանք

Ուղեցույց երիտասարդների համար

Երևան 2008



Հեղինակ՝
Մարինե Հակոբյան

Ծրագրի ղեկավար՝
Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ
Բ.Գ.Ք., դոցենտ **Շուշան Գոյոյան**

Մասնագիտական խորհրդատվությամբ ապահովելու համար շնորհակալություն ենք հայտնում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերով նախարարությանը և ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին: Ուղեցույցի շապիկի լուսանկարը տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում Երեսանի պետական համալսարանին:

Բովանդակություն

Ուղեցույցի նպատակը և խնդիրները	4
ԲԱԺԻՆ Ա. Երիտասարդությունը և տեղեկատվության ազատության իրավունքից օգտվելու անհրաժեշտությունը	5
Ա.1 Ի՞նչ է տեղեկատվության ազատությունը	7
Ա.2 Ովքե՞ր են տեղեկատվություն տնօրինողները	8
Ա.3 Ու՞ր դիմել և ի՞նչ տեղեկատվություն ստանալ	9
Ա.4 Ի՞նչ խորհրդատվություն և տեղեկատվություն է տրամադրվում	15
Ա.5 Տեղեկատվության ազատությունը զբաղվածության ապահովման ոլորտում	30
Ա.6 Տեղեկատվության ազատության իրավունքը աշխատանքային հարաբերություններում	39
ԲԱԺԻՆ Բ. Ինպե՞ս ստանալ տեղեկատվություն	41
Բ.1 Ի՞նչպես դիմել և ի՞նչ ժամկետներում ստանալ տեղեկությունը	41
Բ.2 Պե՞տք է արդյոք վճարել տեղեկություն տրամադրելու համար	45
Բ.3 Ո՞ր տեղեկության տրամադրումը կարող է մերժվել	45
ԲԱԺԻՆ Գ. Տեղեկատվություն և խորհրդատվություն ստանալու իրավունքի պաշտպանության երաշխիքները	48
Գ.1 Պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները	48
Գ.2 Ինչպե՞ս և ու՞մ բողոքարկել տեղեկություն ստանալու իրավունքը խախտելու դեպքում	50
Գ.3 Պատասխանատվությունը տեղեկություն ստանալու իրավունքը խախտելու, անձնական ու ընտանեկան գաղտնիքը հրապարակելու համար	51
Տեղեկատվության ազատության հեռանկարները՝ երիտասարդության կրթության և աշխատանքային հարաբերություններում	53



Ուղեցույցի նպատակը և խնդիրները

Եթե մտադիր եք կրթություն ստանալ, ունենալ այնպիսի մասնագիտություն, որը կօգնի ապահովել ձեր զբաղվածությունը և աշխատել կայուն, հուսալի և շահեկան պայմաններում, ինչպես նաև ցանկանում եք, որ ձեր կրթությունն ու աշխատանքային հարաբերություններն ընթանան առանց բարդությունների և ձեզ համար նպաստավոր միջավայրում, ապա պետք է նախապատրաստվեք դրան ոչ միայն կրթվելու, աշխատելու և ապահովված ապագա ունենալու ցանկությամբ ու պատրաստակամությամբ, այլև՝ անհրաժեշտ տեղեկությամբ զինվելով: Լավ կլինի, որ իմանաք, թե որոնք են ձեզ համար պետականորեն երաշխավորված կրթական, աշխատանքային, զբաղվածության ապահովման և դրանց հետ կապված սոցիալ-տնտեսական հնարավորությունները, ձեզ ուղղված իրավական ծառայությունները, խորհրդատվությունները, ձեր իրավունքներն ու պարտականությունները:

Այս ուղեցույցի նպատակն է բարձրացնել ձեր իրավունքների և հնարավորությունների մասին իրազեկվածության մակարդակը՝ կրթություն ստանալու, զբաղվածություն ապահովելու և աշխատանքային հարաբերություններում: Պետական երաշխավորությամբ ձեզ վերապահված իրավունքները, հնարավորությունները, ինչպես նաև դրանցից օգտվելու վերաբերյալ խորհրդատվությունները կարող են ծառայել իրենց նպատակին, եթե դուք նույնպես շահագրգիռ եք զարգացնել կրթության, սոցիալական գործընկերություն ձևավորելու, աշխատանքային հարաբերություններ կառուցելու և դրանցում առավել պաշտպանված լինելու վերաբերյալ ձեր գիտելիքները:

Տեղեկատվություն ստանալու իրավունքը մարդու հիմնական իրավունքներից է, առանց որի անձը չի կարող օգտվել իր մյուս իրավունքներից, ինչպես նաև մասնակցել հասարակական իրադարձություններին, հանրային կյանքին և անձնական շահերի պաշտպանությանը:

Այսպիսով, իրավունքի իրականացումը սկսվում է տեղեկատվություն ունենալուց:

ԲԱԺԻՆ Ա

Երիտասարդությունը և տեղեկատվության ազատության իրավունքից օգտվելու անհրաժեշտությունը

Երիտասարդության փնտրած և անհրաժեշտ տեղեկությունները հիմնականում կարելի է դասակարգել ըստ հետևյալ տեղեկությունների՝

ա) Կրթության բնագավառում՝

- մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունվելու գործընթացի վերաբերյալ, ըստ ուսումնական հաստատությունների մասնագիտությունների, քննական առարկաների, ընդունելության համար սահմանված արտոնությունների և այլընտրանքների վերաբերյալ,
- ուսումնական հաստության և ուսանողի կամ ունկնդրի՝ միջև կնքվող պայմանագրի բովանդակության մասին,
- ուսանողական նպաստների, կրթաթոշակների և սովորողին ուղղված այլ սոցիալական երաշխիքների, վճարովի ծառայությունների մանրամասներին,
- կրեդիտային համակարգի իրականացման մանրամասներին,
- ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպման և զբաղվածության հնարավորությունների վերաբերյալ,
- ուսանողների և ուսումնական հաստատության այլ սուբյեկտների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

բ) Զբաղվածության ապահովման բնագավառում՝

- մասնագիտական աշխատանքի տեղավորման հնարավորությունների վերաբերյալ,
- համապատասխան առեստավորման կամ լիցենզավորման հիման վրա իրականացվող աշխատանքային գործունեության, դրանց ներկայացվող պահանջների և իրականացման կարգերի վերաբերյալ,

1. **ունկնդիր**՝ սահմանված կարգով մասնագիտական կրթական լրացուցիչ ծրագրով ուսումնառող է (կամ) որակավորման բարձրացման (վերապատրաստման, վերաորակավորման) դասընթացին մասնակցող անձ:

- առանձին սոցիալական խմբերում (հաշմանդամություն, հղիություն, զինծառայություն և այլն) ընդգրկված լինելու դեպքում՝ սահմանված արտոնությունները և երաշխիքները,
- վերապատրաստումներին և վերաորակավորումներին մասնակցելու դեպքերը,
- գործազրկության դեպքում՝ պետական սոցիալական երաշխիքները:

գ) Աշխատանքի բնագավառում՝

- ուսումը և աշխատանքը համատեղելու վերաբերյալ,
- աշխատանքային պայմանագրի ձևերի առանձնահատկությունները,
- աշխատանքի կազմակերպման հետ կապված տեղեկությունները,
- աշխատանքի անվտանգ և նպաստավոր միջավայրի ապահովման հիմքերը,
- առանձին սոցիալական խմբերում ընդգրկված աշխատող լինելու դեպքում՝ սահմանված արտոնությունները և երաշխիքները,
- վերապատրաստումներին և վերաորակավորումներին մասնակցության դեպքերը:

Այս բնագավառներում առաջացող խնդիրների մեծ մասը հետևանք է մի կողմից երիտասարդների, մյուս կողմից սեփականության բազմաձևության հիման վրա գործող ուսումնական հաստատությունների, կազմակերպությունների կամ ընկերությունների ղեկավարության իրազեկվածության ոչ բավարար մակարդակի և տեղեկությունները չկարևորելու խնդրի:

Այսպես. կրթությունը և երիտասարդության զբաղվածության հարցը Հայաստանի Հանրապետությունում համարվում է առաջանցիկ զարգացման կարևորագույն նախապայման և գտնվում է պետության հովանավորության ներքո:

Հանրապետությունում ապահովված են իրավական բավարար հիմքեր՝ ձեռք ուղղված ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն անվճար իրականացնելու համար:

Ա.1 Ի՞նչ է տեղեկատվության ազատությունը

Տեղեկատվության ազատությունը տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու և դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացումն է (տես՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդ. 3-րդ): Տեղեկություն ստանալու իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է: Այն ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածում, որի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք, այդ իրավունքը ներառում է իր համոզմունքներին հավատարիմ մնալու ազատությունը և ցանկացած միջոցներով ու անկախ պետական սահմաններից տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը»:

Տեղեկություններ փնտրելու և ստանալու իրավունքն ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրության 27-րդ և 27.1 հոդվածներում: Սահմանադրության 27.1 հոդվածը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը տեղեկություն հասկացության բավականին ընդգրկուն շրջանակ է ուրվագծում: Ըստ օրենքի 3-րդ հոդվածի՝ տեղեկություն է համարվում՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալները՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ): Կարևոր է, որ օրենքը տեղեկություն է դիտում ոչ միայն ավանդական կրիչի վրա առկա տվյալները, այլև չի դնում կրիչի որևէ սահմանափակում՝ էլեկտրոնային, թե ֆիզիկական: Տեղեկությունը կարող է լինել տեքստային կամ էլեկտրոնային փաստաթղթի, ձայնագրության, տեսագրության կամ լուսաժապավենի, գծագրերի, սխեմաների, նոտաների կամ քարտեզների տեսքով: Այն կարող է ամրագրված լինել

փաստաթղթի, ժապավենի (տեսաձայնային), պնակիտի (դիսկետի), խտասկավառակի (CD), թվային տեսասկավառակի (DVD) ու այլ նյութական և էլեկտրոնային կրիչների վրա:

Ա.2 Ո՞վքեր են տեղեկատվություն տնօրինողները

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքում տեղեկատվություն տնօրինելու իրավասությունը վերապահված է այն մարմնին, հիմնարկին, կազմակերպությանը կամ դրանց պաշտոնատար անձին, որն ունի կամ տնօրինում է փնտրվող տեղեկությունները: Կազմակերպությունների թվում են նաև բյուջեից ֆինանսավորվող կամ հանրային նշանակության կազմակերպությունները: Դրանք են ապրանքային շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները («*SU մասին*») ՀՀ օրենք, հոդ. 3-րդ): Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

1. ապահովել տեղեկությունների մատչելիությունը և իրապարակայնությունը,
2. իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը և պահպանումը,
3. փնտրելու դեպքում՝ ձեզ տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն,
4. սահմանել իր կողմից բանավոր և (կամ) գրավոր տեղեկությունների տրամադրման կարգը. («*SU մասին*» օրենք 12-րդ հոդ.):

Հիշեք, համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի՝ կազմակերպությունում կարող է նշանակված լինել տեղեկատվության համար պատասխանատու պաշտոնատար անձ, որի խնդիրն է ձեզ մատչելիորեն բացատրել կամ տրամադրել տեղեկություններ իրենց գործառույթների, ծառայությունների, ինչպես նաև՝ տեղեկության տրամադրման կարգի մասին:

Ձեզ անհրաժեշտ կրթական, աշխատանքային և զբաղվածության ապահովման բնագավառի տեղեկատվություն տնօրինողները կարող են լինել՝

- Հայաստանի Հանրապետության կառավարությունը,
- կրթության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը,
- աշխատանքի և զբաղվածության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը՝ Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունը,
- տարածքային կառավարման մարմինները,
- տեղական ինքնակառավարման մարմինները,
- Քաղաքացիական ծառայության խորհուրդը,
- մասնագիտական ուսումնական հաստատությունները,
- գործատուները և պայմանագրային կողմ հանդիսացող այլ կողմերը:

Ա.3 Ու՞ր դիմել և ի՞նչ տեղեկատվություն ստանալ

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրավունք ունեք ծանոթանալ ձեզ վերաբերող տեղեկություններին, ինչպես նաև իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց ներկայացնել դիմումներ կամ առաջարկություններ՝ ձեր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով և ողջամիտ ժամկետում ստանալու պատշաճ պատասխան:

Եթե ունեք մասնագիտական կրթություն կամ ուսուցում ստանալու ցանկություն կամ արդեն կրթական գործընթացի մասնակից եք, ապա ներքոնշյալ տեղեկություն տնօրինողներից կարող եք ստանալ ձեր հարաբերությունների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունները՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունից կարող եք ստանալ տեղեկություններ՝

- պետական կրթական քաղաքականության իրականացման վերաբերյալ,
- պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգի վերաբերյալ,
- ուսուցանվող մասնագիտությունների ցանկի վերաբերյալ,
- մասնագիտական կրթության յուրաքանչյուր ձևի համար հաստատ-

ված պետական պատվերի վերաբերյալ,

- պետական տվյալ մասնագիտական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունների վերաբերյալ,
- պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերի վերաբերյալ,
- տվյալ մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարության վերաբերյալ,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված, վերակազմակերպված և լուծարված մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների մասին,
- մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգի մասին,
- մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերի վերաբերյալ՝ ըստ կրթական ծրագրերի, ուսուցման հիմքի, ձևի, տևողության և դրանց հիման վրա տրվող համապատասխան որակավորումների,
- մասնագիտական կրթության արգելված մասնագիտությունների ցանկի վերաբերյալ, որով արգելվում է հեռակա, հեռահար², դրսեկուրսան³ ձևերով ուսուցումը,
- ըստ մասնագիտական կրթության մասնագիտությունների տրվող որակավորումների ցանկերի վերաբերյալ,
- մասնագիտական ուսումնական հաստատությունների և մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող կազմակերպությունների, դրանցում ուսուցանվող կրթական ծրագրերի լիցենզավորման կարգի մասին,
- մասնագիտական ուսումնական հաստատությունների և մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների պետական հավատարմագրման կարգի, չափանիշների և տևողության մասին,
- միջին մասնագիտական ուսումնական հաստատությունից շրջանավարտների բարձրագույն ուսումնական հաստատություններում (այսուհետ նաև՝ ԲՈւՀ) և ուսանողների (ներառյալ՝ ուսումնառությունը չա-

2. **հեռահար (դիստանցիոն) ուսուցում**՝ համակարգված ուսուցման ձև, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը ուսանողի կամ ունկնդրի և դասախոսի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով:

3. **դրսեկուրսոն (էքստեռնատ)**՝ ինքնակրթությամբ և արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում գիտելիքների ու կարողությունների ընթացիկ, ամփոփիչ գնահատման եղանակով իրականացվող կրթության ձև:

վարտած անձանց) միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթությունը շարունակելու կարգի մասին,

- մասնագիտական կրթությանը ֆինանսական միջոցների տրամադրման կարգի՝ ուսման վարձի փոխհատուցման, կրթաքոշակ սահմանելու, ուսանողական նպաստ և ուսումնական վարկ հատկացնելու,
- մասնագիտական կրթության իրականացման առկա, հեռակա, հեռահար (դիստանցիոն), դրսեկության (էքստեռնատի) և անհատական մասնագիտական ուսուցման (վարպետային ուսուցման⁴) ձևերով ուսուցման մասնագիտությունների ցանկերի և կարգերի վերաբերյալ,
- դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրով ուսուցում իրականացվող մասնագիտությունների ցանկի վերաբերյալ,
- պետական ԲՈՒՀ-երի դիմորդների ընդունելության կարգի և գիտելիքների գնահատման միասնական համակարգի վերաբերյալ,
- ուսանողներին մեկ ԲՈՒՀ-ից մեկ ուրիշը փոխադրելու կարգի մասին,
- ասպիրանտուրայի ընդունելության և ասպիրանտուրայում ուսուցման, դոկտորանտների և հայցորդների ձևակերպման կարգի մասին,
- ասպիրանտուրայի դիմորդների հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևի վերաբերյալ,
- բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող ուսումնական կամ գիտական կազմակերպություններում ասպիրանտուրան պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և ավարտած մասնագետների աշխատանքի տեղավորման կարգի վերաբերյալ: *(Տե՛ս «Կրթության մասին» օրենքի 36-րդ հոդվածը, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքի 15-րդ հոդվածը, «Բարձրագույն մասնագիտական և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 21-րդ հոդված):*

Քանի որ ՀՀ կրթության պետական կառավարման լիազոր մարմինը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, կրթության բնագավառի քաղաքականության ապահովման հիմնական օղակն է, հետևաբար վերոնշյալ տեղեկությունները կարող էք ստանալ նաև այս նախարարությունից, ինչպես նաև ստանալ տեղեկություններ՝

- ուսումնական հաստատությունների մանկավարժական և ղեկավար

4. վարպետային ուսուցում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի իրականացումն անհատական մասնագիտական ուսուցման ձևով, որը կարող է իրականացվել ԿԳՆ կողմից լիցենզավորված վարպետի կողմից:

կադրերի որակավորման կարգի վերաբերյալ,

- պետական և հավատարմագրված ոչ պետական նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին և բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կանոնների և դրանց իրականացման վերաբերյալ,
- ուսումնական հաստատությունների սովորողների գիտելիքների փոխադրական և ամփոփիչ ստուգման կարգի վերաբերյալ,
- հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական խորհուրդների շնորհած պատվավոր կոչումների և տիտղոսների մասին,
- օտարերկրյա պետությունների կրթական փաստաթղթերի համարժեքության որոշման և ճանաչման կարգի վերաբերյալ,
- ուսանողների (նաև ունկնդիրների)՝ մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգի մասին,
- պետական կրթական չափորոշիչների պահանջների կատարման, շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և նրանց պատրաստման որակի նկատմամբ վերահսկողության արդյունքների մասին,
- մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում որակի գնահատման և (կամ) հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների կողմից կրթության որակի ապահովման գործընթացի իրականացման կարգի մասին,
- արհեստագործական և միջին մասնագիտական կրթության փորձնական կրթական ծրագրերի իրականացման կարգի վերաբերյալ,
- երկրորդ մասնագիտական կրթություն ստանալու կարգի վերաբերյալ,
- աշխատաշուկայի վերլուծության և ուսումնական հաստատություն ընդունելության վերաբերյալ ներկայացված առաջարկների վերաբերյալ,
- պետական բյուջեից գիտության զարգացմանն ուղղված ֆինանսավորման ծավալների մասին ներկայացված առաջարկությունների մասին: (Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը, «Բարձրագույն մասնագիտական և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդված):

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառի վերաբերյալ այլ լիազորված մարմիններից դուք կարող եք ստանալ տեղեկություններ՝

- արհեստագործական և միջին մասնագիտական պետական կրթական չափորոշիչների մշակման, մասնագիտությունների և մասնագիտացումների ցանկերի, մասնագետների որակավորման պահանջների, ուսանողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների նկատմամբ պահանջների ձևավորման, մեծահասակների կրթության և ուսուցման կազմակերպման գործընթացներին իրենց իրավասության սահմաններում մասնակցության և արդյունքների վերաբերյալ,
- շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորման և որակավորման աստիճանների շնորհման գործընթացներին իրենց իրավասության սահմաններում մասնակցության վերաբերյալ,
- բնագավառի աշխատողների որակավորման բարձրացման և վերաորակավորման կազմակերպման գործընթացներին իրենց իրավասության սահմաններում մասնակցության վերաբերյալ,
- ուսանողների, ունկնդիրների ուսումնարտադրական, տեխնոլոգիական, նախադիպլոմային պրակտիկաների և գործնական աշխատանքների իրականացման և դրանց հեռանկարների մասին,
- աշխատանքային շուկայի պահանջարկի ուսումնասիրության արդյունքում մասնագետների և նրանց պատրաստման պայմանների վերաբերյալ արված առաջարկությունների մասին,
- իրենց ենթակայության ուսումնական հաստատությունների կանոնադրությունները,
- ուսումնական հաստատությունների և մասնագիտական կրթությամբ մասնագետների հիմնական գործատուների համագոյակցության դեպքերի և համատեղ մշակված առաջարկությունների վերաբերյալ,
- ուսումնական հաստատության կամ այլ ծրագրերին ուսանողների մասնակցության դեպքերի կամ ձևերի մասին,

Ձեզ անհրաժեշտ և ուղղակիորեն ձեզ հետ առնչվող տեղեկատվությունը դուք կարող եք ստանալ ձեր ուսումնական հաստատությունից: Վերջինս, որպես անմիջական տեղեկատվություն տնօրինող ձեզ կարող է տրամադրել տեղեկություններ՝

- ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթական տեխնոլոգիաների և ձեր ընթացիկ ատեստավորման ձևերի, կարգի և պարբերա-

կանության ինքնուրույն ընտրված լուծումների մասին,

- բոլոր տարակարգերի աշխատողների որոշված հաստիքացուցակի, ընտրված աշխատողների զբաղեցրած պաշտոնների նշանակման կամ ընտրության կարգերի մասին,
- կրթական ծրագրերի՝ դիմորդների, ներառյալ՝ օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց ընդունելության, ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ,
- մասնագիտական կրթության մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի մշակման ու հաստատման, ուսումնական գրականության և ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակման վերաբերյալ,
- ըստ ուսումնական հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների՝ աշխատողների տեղաբաշխման մասին,
- մասնագետների որակավորման բարձրացման, վերապատրաստման դասընթացների կազմակերպման մասին,
- օտարերկրյա պետությունների կառավարման համապատասխան մարմինների հետ կնքած կրթական պայմանագրերի, համաձայնագրերի հիման վրա իրականացվող օտարերկրյա քաղաքացիների ընդունելության, մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև մասնագետների փոխանակման, համատեղ իրականացվող գիտական աշխատանքների և ծրագրերի վերաբերյալ,
- տեղական և միջազգային գիտակրթական և հետազոտական ծրագրերի իրականացման և դրանց կատարման, դրանցում սովորողների մասնակցության ապահովման վերաբերյալ,
- վճարովի կրթական ծառայությունների վերաբերյալ,
- հետբուհական կրթության իրականացման վերաբերյալ,
- ԲՈՒՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող հանրակրթական, միջին մասնագիտական, լրացուցիչ կրթության ծրագրեր վերաբերյալ,
- ֆինանսների կառավարման վերաբերյալ, ներառյալ՝ աշխատավարձի, կրթաթոշակի վճարման, ուսման վարձի փոխհատուցման, ուսանողական նպաստների տրամադրման, ԲՈՒՀ-ի պահպանման և զարգացման, գիտահետազոտական գործունեությանը նպատակաուղղված ծախսերի կատարման վերաբերյալ տեղեկությունները:

Ա.4 Ի՞նչ խորհրդատվություն և տեղեկատվություն է տրամադրվում

1. Խորհրդատվությունը և տեղեկատվությունը՝ մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական կրթության ընթացքում

Եթե դուք ցանկանում եք կրթություն ստանալ և որոշել եք դիմել մասնագիտական ուսումնական հաստատության, նախ պետք է կողմնորոշվեք ձեր մասնագիտության ընտրության հարցում: Դեռևս հանրակրթական ուսուցման ավագ դպրոցում ձեր կրթությունը նպատակաուղղվում է հենքային հանրակրթական պատրաստությունն ապահովող գիտելիքների յուրացմանը: Ավագ դպրոցում սովորողների հակումներին, կարողություններին և ընդունակություններին համապատասխան կարող է լրացուցիչ կրթական ծրագրերով իրականացվել տարբերակված (հոսքային) ուսուցում: Այստեղ հնարավորություն է ընձեռվում ընտրել հոսքային ուսուցման ուղղվածությունը՝ բնագիտական, հումանիտար, ճշգրիտ և արհեստագործական: Սակայն նախատեսված է նաև հանրակրթական ծրագրերի խորացված կամ մասնագիտացված ուսումնառությունը, ինչպես նաև երեխայի ու նրա օրինական ներկայացուցչի ընտրությամբ, այլընտրանքային ուսուցման տարբերակը:

Սակայն չի նշանակում, որ դուք կամ ձեր ծնողները (այլ օրինական ներկայացուցիչները) չեք կարող, կամ ձեր ուսումնական հաստատությունը, համայնքային և այլ ծառայությունները չեն կարող աջակցել ձեզ մասնագիտության, կրթության ձևի ու մակարդակի ընտրության հարցում: Օրինակ, ձեր մասնագիտական կողմնորոշմանն օգնելու նպատակով մասնագիտական ուսումնական հաստատությունը կամ սոցիալական գործընկերության⁵ կողմ հանդիսացող կազմակերպությունը կարող են կազմակերպել այցեր, հանդիպումներ նախնական (արհեստագործական), միջին կամ բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններ, ինչպես նաև գործարաններ, կազմակերպություններ կամ պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններ, արդյունաբերական համալիրներ և այլն: Նման այցերի հնարավորության դեպքում, խորհուրդ է տրվում լինել հետևողական, ճշտել տվյալ մասնագիտական զբաղվածության, աշխատանքի հետ կապված մանրամասները:

5. **սոցիալական գործընկեր՝** արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության եւ ուսուցման համակարգին աջակցող, համագործակցող եւ համակարգի զարգացման գործում շահագրգիռ կազմակերպություն կամ կազմակերպությունների միավորում, ներառյալ՝ ցանկացած տիպի ուսումնական հաստատություն:

Հիշեք, որպեսզի այսօր ճիշտ ընտրեք ձեր մասնագիտությունը և վաղը չստաձեք դա փոխելու մասին, դուք պետք է լինեք հնարավորինս իրագեկված և ցուցաբերեք նախաձեռնողականություն:

Կողմնորոշվելու համար նշեք, որ ցանկացած կրթության հիմքը կրթական ծրագիրն է, որը սահմանում է որոշակի մակարդակ և ուղղվածություն ունեցող կրթության բովանդակությունը, անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը: Դրանք լինում են հանրակրթական և մասնագիտական (տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը):

Մասնագիտական կրթական ծրագրերը (հիմնական և լրացուցիչ) բաշխվում են չորս մակարդակների միջև՝

- նախնական մասնագիտական (արհեստագործական)՝ «արհեստագործ» որակավորմամբ, որի տևողությունը 6 ամսից մինչև 3 տարի է, սակայն կառավարության որոշմամբ կարող է սահմանվել կրթության այլ հիմք և ուսուցման տևողություն,
- միջին մասնագիտական՝ «մասնագետ» որակավորմամբ, որի տևողությունը 2 տարուց մինչև 5 տարի է,
- բարձրագույն մասնագիտական՝ «բակալավր» և «մագիստրոս» որակավորմամբ, որոնց տևողությունը համապատասխանաբար 4 տարի և 2 տարի տևողությամբ (ընդհանուր առմամբ՝ 6 տարի),
- հետբուհական մասնագիտական՝ «ասպիրանտի», «հետազոտողի» կամ «հայցորդի», «դոկտորանտ» որակավորմամբ, որոնց առավելագույն տևողությունը 3 տարի է:

Եթե դուք սովորում եք կրթության հեռակա կամ դրսեկրթության ձևերում, ապա ուսումնառության տևողությունը կարող է առնվազն 1 տարի ավելանալ:

2. Տեղեկություններ ուսումնական հաստատություն ընդունելության և որպես սովորող ամրագրվելու վերաբերյալ

Եթե դուք արդեն կողմնորոշվել եք մասնագիտության ընտրության հարցում, ուրեմն պետք է կատարեք առաջին քայլը. ծանոթացեք ընդունելության պահանջներին և հիմքերին:

6. **հետբուհական մասնագիտական կրթություն**՝ բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի) հենքի վրա ասպիրանտի, հետազոտողի, հայցորդի ծրագրով իրականացվող մասնագիտական կրթություն:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք, սակայն պարտադիր է համարվում հիմնական ընդհանուր կրթությունը (1-9 դասարանները)՝ Դրանից հետևում է, որ եթե ցանկություն ունենաք ստանալ մասնագիտական կրթություն, պետք է առնվազն ունենաք պարտադիր կրթության վկայական: Դա կարող է բավարար լինել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության՝ իննամյա հիմնական կրթության բազայի հիման վրա կրթությունը շարունակելու համար:

Պարտադիր հիմնական ընդհանուր կրթության պահանջը չի տարածվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որոշակի կատեգորիաների վրա, որոնք սահմանում է ՀՀ կառավարությունը: Այս բացառությունը հիմնականում կիրառվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության համակարգում, որի նպատակն է հաշմանդամություն ունեցող անձանց տալ հնարավորություն հետագայում մասնագիտական կրթություն ստանալու համար: Այսինքն՝ հաշմանդամություն ունեցող անձինք կարող են նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստանալ առանց պարտադիր կրթության (1-9 դասարանների) վկայականի: Իսկ միջին և բարձրագույն կրթության նկատմամբ այդ բացառությունն ուղղակիորեն չի կիրառվում: Սակայն, եթե տվյալ անձը, չունենալով պարտադիր կրթություն, ուսումնառում է ՀՀ կառավարության կողմից հաստատված ցանկում ընդգրկված նախնական մասնագիտական մասնագիտությամբ և ստանում դիպլոմ, ապա կարող է դրանով շարունակել կրթությունը միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում: Ընդհանուր առմամբ մասնագիտական կրթության, հատկապես՝ բարձրագույն մասնագիտական կրթության համար, հիմքը կարող է լինել միջնակարգ կրթության (1-ից-12-րդ դասարանների) ատեստատը կամ նախնական և միջին մասնագիտական կրթության դիպլոմը:

Ի դեպ, համաձայն ՀՀ Սահմանադրության, միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

Մասնագիտական կրթության համար անհրաժեշտ կրթական հիմքը հստակեցնելուց հետո, անդրադառնանք ուսումնական հաստատության ընդունելության պահանջներին, ըստ ուսումնական հաստատություննե-

7. Հանրակրթությունն իրականացվում է նախադպրոցական՝ մանկապարտեզային, տարրական դպրոցի 1-4 դասարաններում կրթության, հիմնական կրթության՝ 1-9 դասարաններում կրթության (տարրական դպրոցը և միջին՝ 5-9 դասարաններում) և միջնակարգ կրթության՝ 1-12 դասարաններում (հիմնական դպրոցի կրթությունը և ավագ՝ 10-12 դպրոցը) կազմակերպման միջոցով:

րի՝ մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկի: Դրանք սահմանում է հիմնադիրը՝ լիազոր մարմնի ներկայացմամբ: Որպես կանոն, պետական ուսումնական հաստատությունների հիմնադիրը ՀՀ կառավարությունն է, իսկ ոչ պետական ուսումնական հաստատությունների դեպքում՝ այդպիսին կարող է լինել թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձը:

Հիշե՛ք, պետական և հավատարմագրված ոչ պետական մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը հաստատվում է յուրաքանչյուր տարվա համար և հրապարակվում մինչև տվյալ ուսումնական տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 1-ը: Հաստատված ցանկում փոփոխություններ և լրացումներ կատարելն արգելվում է:

Պետական և հավատարմագրված ոչ պետական մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալ տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը ներառում է՝

1. կրթության ձևը (առկա (ստացիոնար), հեռակա, հեռահար (դիստանցիոն), դրսևկություն(ինքնակրթության և ընտանեկան ուսուցման)),
2. մասնագիտություններն ըստ ուսումնական հաստատության,
3. յուրաքանչյուր մասնագիտության համար նախատեսված ընդունելության քննությունների առարկաների անվանումը,
4. քննության ձևը (մրցութային, ոչ մրցութային),
5. քննության տեսակը՝ գրավոր (թելադրություն, շարադրություն, թեսթ), բանավոր, հարցազրույց և այլն:

2005թ.-ից ՀՀ-ում գործարկվել է կենտրոնացված քննությունների կազմակերպման նոր համակարգը, որի արդյունքում ավագ դպրոցի ավարտական և ԲՈՒՀ ընդունելության քննությունները նույնականացվել են: Այսինքն, հանձնելով հայոց լեզվի և գրականության, օտար լեզվի, մաթեմատիկայի, ֆիզիկայի (կամ քիմիայի, կենսաբանության), պատմության և այլն, մեկ՝ մասնագիտական անհրաժեշտությամբ ընտրված առարկայի առաջին կամ երկրորդ (մրցութային լինելու դեպքում) մակարդակի քննություն, ձեր միավորով կարող եք մասնակցել ձեր ընտրած բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունների մրցութին:

Ամփոփիչ գիտելիքների գնահատումն ու թեստավորումը նախապատրաստվում, կազմակերպվում և անց է կացվում ՀՀ ԿԳՆ «Գիտելիքների գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի (ԳԹԿ) կողմից: Գիտելիքների, կարողությունների ու հմտությունների գնահատումը, դրանց չափորոշիչներն ու իրականացման մեխանիզմները, համապատասխան մեթոդական ուղեցույցների մշակումն իրականացվում և տրամադրվում է հրապարակայնության սկզբունքով:

Յուրաքանչյուր դպրոցի տնօրեն դպրոցում ստեղծում է տեղեկատու կետ և կազմակերպում դրա աշխատանքները: Տեղեկատու կետի պատասխանատու աշխատակիցը ծանոթացնում է քննությունների կազմակերպման և անցկացման ընթացակարգին, դիմում-հայտի, քննական թեստերի և պատասխանների ձևաթղթերի լրացման կարգին, փորձարկման ընթացքում աշակերտների իրավունքներին և պարտականություններին: Դրանց կարող էք ծանոթանալ նաև ինտերնետի օգնությամբ, այցելելով ԳԹԿ-ի ինտերնետային էջ՝ www.atc.am :

Ավարտական, համապատասխանաբար նաև՝ բուհական ընդունելության քննությունների նախապատրաստվելու ընթացքում դուք պետք է գիտենաք, որ համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ «Պետական հանրակրթական դպրոցների ավարտական, ինչպես նաև պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունների անցկացման համար նախապատրաստվող հարցաթերթիկները (հարցաշարերը, քննական հարցերը, խնդիրներն ու այլ առաջադրանքները) կազմվում են բացառապես պետական հանրակրթական դպրոցների (1-12-րդ դասարանների) կրթական ծրագրերով նախատեսված, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի՝ ԿԳՆ-ի կողմից պետական հանրակրթական դպրոցներում օգտագործման համար երաշխավորված և առնվազն մեկ ուսումնական տարվա ընթացքում պետական հանրակրթական դպրոցներում դասավանդված դասագրքերին, ձեռնարկներին, խնդրագրքերին և ժողովածուներին համապատասխան:

Ուսումնական հաստատություն ընտրելիս՝ խորհուրդ է տրվում ուշադրություն դարձնել այն առանձնահատկություններին, որոնք հաշվի առնելով հիմնադիրը կազմում և հաստատուտում է տվյալ ուսումնական հաստատության ստեղծման մասին որոշումը: Օրինակ՝ արվեստի, ֆիզիկական կուլտուրայի կամ զինվորական մասնագիտությամբ ուսումնական հաստատությունները բացի միասնական քննությունների արդյունքներից, ընդունելության քննություններում ընդգրկում են նաև մասնագիտական,

ստեղծագործական կամ հմտությունների այլ պահանջներ, որոնք մշակվում են բացառապես տվյալ մասնագիտության առանձնահատկություններից ելնելով: Կամ, առանձին մասնագիտությունների գծով կարող է սահմանափակվել հեռակա կամ դրսեկության ձևերով ուսուցումը և այլն:

Եղեք ուշադիր, քանի որ դիմորդ լինելու դեպքում՝

- ԲՈՒՀ-ը ձեզ հետ պետք է կնքի պայմանագիր, որի տեքստը հրապարակվում է ընդունելության հայտարարության հետ, և նախապես պետք է տրամադրվի ձեզ՝ դեռևս դիմորդի կարգավիճակում,
- ԲՈՒՀ-ի և ձեր միջև կնքված պայմանագրում պարտադիր պետք է ամրագրվի ձեր սովորելու տարիների տևողությունը և տվյալ ԲՈՒՀ-ում բարձրագույն կրթության յուրաքանչյուր աստիճանի համար նախատեսված ուսման վարձի ընդհանուր չափը՝ բաժանված ըստ ուսումնական տարիների,
- պայմանագիրը, դրանով նախատեսված ուսման վարձի ընդհանուր և ըստ տարիների բաժանված չափերն ուսումնառության ամբողջ ընթացքում փոփոխման ենթակա չեն: Սակայն, եթե տարբեր պատճառներով հեռացվել եք, իսկ այնուհետև՝ վերականգնվել, ապա ձեզ հետ կնքվում է նոր պայմանագիր և ձեր ուսման վարձը հաշվարկվում է տվյալ տարվա համար սահմանված վարձավճարի չափով,
- վճարովի հիմունքներով սովորելու դեպքում ձեր ուսման վարձը կարող եք մուծել ըստ կիսամյակների: *(տես «Բարձրագույն մասնագիտական և հետրուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 14-րդ հոդվածը):*

Հիշեք, յուրաքանչյուր ուսումնական հաստատություն պարտավոր է ընդունելության տվյալ տարվա կարգը հաստատվելուց հետո ցանկացած անձի, այդ թվում՝ ձեզ և ձեր ծնողներին (կամ օրինական այլ ներկայացուցչին) ծանոթացնել ընդունելության պահանջներին, իր լիցենզիային, պետական հավատարմագրման վկայականին (առկայության դեպքում), որի վերաբերյալ տեղեկությունները, դիմորդ դառնալու դեպքում գրանցվում են ձեր ընդունելության փաստաթղթերում, կրթության գործընթացը կարգավորող մյուս փաստաթղթերին, իրենց կանոնադրությանը և ներքին կանոնակարգերին:

Տվյալ տարվա ընդունելությանը ներկայացվող պահանջների կազմում, ՀՀ կառավարությունը սահմանում է նաև պետական մասնագիտական ուսումնական հաստատությունների դիմորդների ընդունելության արտո-

նությունները: Ընդունելության ժամանակ արտոնյալ պայմաններ հիմնականում կարող են սահմանվել սոցիալական խոցելի խմբերի համար, օրինակ՝ այն դիմորդների, ովքեր մնացել են առանց ծնողական խնամքի, ունեն հաշմանդամության առաջին կամ երկրորդ կարգ, համարվում են պատերազմական գործողությունների ժամանակ կամ դրանց հետևանքով զոհված կամ վիրավորված զինծառայողի ընտանիքի անդամ և այլն: Իսկ ոսկե մեդալակիրների համար սահմանված հիմնական արտոնությունն այն է, որ մրցույթի արդյունքում հավասար միավորներ ունենալու դեպքում կարող է նախապատվությունը տրվել նրանց:

Եթե դուք դուրս եք մնացել ընդունելության քննությունների մրցույթից, ապա ԲՈւՀ-ի և ԿԳՆ-ի համաձայնությամբ կարող եք հրամանագրվել վճարովի հիմունքներով՝ ելնելով ԲՈւՀ-ի իրական հնարավորությունից և հիմք ընդունելով նախքան ընդունելության քննությունները բուհի ներկայացրած տեղեկանքը: Մակայն, եթե դուք պետական ուսումնական հաստատություն հրամանագրվեք այդ կարգով, ապա չեք կարող օգտվել «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի առաջին կետի «ա» ենթակետի արտոնություններից, այսինքն պարտադիր զինվորական ծառայության տարեկետման հնարավորությունից: Այդ կարգավիճակը առավել հայտնի է «ԱՏԻ» (առանց տարեկետման իրավունքի) անվանումով (*տե՛ս «Կրթության մասին» օրենքի 28-րդ հոդվածը*):

Մասնագիտական ուսումնական հաստատության ընդունելության քննությունները դրական արդյունքներով հանձնելու և մրցույթը հաղթահարելու դեպքում՝ ձեր, որպես տվյալ ուսումնական հաստատության ուսանողի կամ սովորողի, հրամանագրումն ավարտվում է ընդունելության քննությունների ավարտից հետո՝ **քսանօրյա** ժամկետում: Դուք դրա մասին կարող եք տեղեկանալ Հանրապետական ընդունող հանձնաժողովի որոշումից, որը յուրաքանչյուր ուսումնական հաստատություն փակցնում է բոլորի համար տեսանելի վայրում:

Տեղեկություններ կրթության կազմակերպման և մասնակիցների իրավունքների վերաբերյալ

Ըստ ձեր կարողությունների և պահանջմունքների՝ կրթական ծրագրերն իրականացվում են առկա (ստացիոնար), հեռակա, հեռահար (դիստանցիոն) և դրսեկության (ընտանեկան և ինքնակրթության) ձևերով: Անկախ ձեր ընտրած կրթության ձևից, մույն կրթական ծրագրերի շրջանակներում գործում է միասնական պետական կրթական չափորոշիչը: Այսինքն, անկախ այն հանգամանքից, թե դուք առկա, հեռակա թե դրսեկու-

թյան ձևով եք ստանում ձեր մասնագիտական կրթությունը (օրինակ՝ մանկավարժական, իրավաբանական և այլն)՝ ձեզ առաջարկվող կրթական չափորոշիչները չեն կարող տարբեր լինել: Կարող են տարբեր լինել ուսումնառության տևողությունները և դասապլոցեսին մասնակցության ձևը:

Քանի որ կրթական ծրագիրը՝ մասնագիտական կրթության բովանդակությունը, ուղղվածությունը և նպատակն է, որը արտահայտում է անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ծավալը, արժեհամակարգը, դրանց ձևավորմանն ուղղված ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, ուսուցման կազմակերպման ձևերի, մեթոդների, ուսումնական գործունեության տեսակների ամբողջությունը, ապա կրթական գործընթացը բաղկացած է հենց այդ նորմատիվ փաստաթղթերից: (*Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը*): Հետևաբար, կրթության գործընթացը կարգավորվում է ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով, ուսումնական ժամանակացույցով և դասացուցակներով: Դրանք բաց փաստաթղթեր են և դուք կարող եք ծանոթանալ դրանց բովանդակության կամ այլ մանրամասների:

Հիշե՛ք, որ ուսումնական հաստատությունը պարտավոր է ձեզ ծանոթացնել կրթական գործընթացի հետ կապված ցանկացած փաստաթղթի:

Մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներով և կրթական ծրագրերով նախատեսված և հիմնարկներում ու կազմակերպություններում իրականացվող պրակտիկաները (ուսումնական, արտադրական, ուսումնաարտադրական, տեխնոլոգիական, նախադիպլոմային և այլն) իրագործվում են այդ հիմնարկների և կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի համաձայն (*տե՛ս «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը*):

Կրթական գործընթացի հիմնական մասնակիցներն են՝

- ուսանողները (սովորողները),
- մանկավարժական աշխատողները (այդ թվում՝ վարչական, պրոֆեսորադասախոսական և օժանդակող անձնակազմը):

Քանի որ վերջին տարիներին պրոֆեսորադասախոսական, մանկավարժական կազմի ու գիտական աշխատողների շրջանում ավելացել է երիտասարդների թիվը, կարծում ենք օգտակար կլինի անդրադառնալ թե՛ ու-

սանողների, թե՛ մանկավարժական աշխատողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ տեղեկություններին:

Եթե դուք ուսանող եք, ունկնդիր, ասպիրանտ կամ հայցող (այսուհետ՝ սովորող) և սովորում եք մասնագիտական ուսումնական հաստատությունում, ապա իրավունք ունեք՝

- ծանոթանալու ԲՈՒՀ-ի կանոնադրությանը և նորմատիվ այլ փաստաթղթերի, կնքելու պայմանագիր՝ ուսումնառության պայմանների վերաբերյալ,
- ձեր հայեցողությամբ ընտրել մասնագիտություն, ԲՈՒՀ-ի տեսակը և ուսուցման ձևը,
- ցանկացած կրթական աստիճանում ընդհատել կամ շարունակել մասնագիտական կրթությունը,
- ձեր կրթությունը նախկինում ընդհատած լինելու դեպքում՝ մինչև 10 տարվա ընթացքում վերականգնվելու ԲՈՒՀ՝ անկախ հեռացման պատճառից,
- ազատորեն ստանալ գիտելիք, զբաղվել հետազոտություններով,
- մասնակցել ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատել պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը,
- ընտրել տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր (էլեկտիվ) և ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) դասընթացներ,
- մասնակցել ձեր կրթության բովանդակության ձևավորմանը՝ պահպանելով մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջները,
- մասնակցել ուսումնական հաստատության կառավարման համապատասխան մարմինների աշխատանքներին,
- բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, անցնելու ուսումնական այլ դասընթաց՝ սահմանված կարգով,
- վճարովի ուսուցման համակարգից փոխադրվել անվճար ուսուցման համակարգ,
- օգտվել ուսման տարեկան վարձի մասնակի կամ լրիվ փոխհատուցման իրավունքից (ուսումնական նպաստների ձևով),

- օգտվել սահմանված չափի կրթաթոշակներից, նպաստներից և վարկերից, նվիրատվություններից և դրամաշնորհներից,
- ուսումնառության ընթացքում տեղափոխվել մեկ այլ պետական հավատարմագրված մասնագիտական ուսումնական հաստատություն (ներառյալ՝ օտարերկրյա ԲՈՒՀ-երը),
- ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան՝ լիիրավ մասնակցել կոլեգիալ կառավարման մարմինների աշխատանքներին,
- օգտվել ակադեմիական արձակուրդի⁸ հնարավորությունից՝ առողջական պատճառներով կամ այլ բացառիկ դեպքերում, որի ընթացքում ձեր՝ սովորողի կարգավիճակը պահպանվում է,
- անվճար օգտվելու ուսումնական հաստատության գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից, մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին, սեմինարներին և սիմպոզիումներին,
- ուսուցման առկա ձևով սովորելու դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ, գտնվելու արձակուրդում՝ ոչ պակաս, քան 7 շաբաթ ընդհանուր տևողությամբ,
- բողոքարկել ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- հանրակացարանի առկայության և բնակելի տարածքի կարիք ունենալու դեպքերում սահմանած կարգով ստանալու հանրակացարանում համապատասխան տեղ,
- միավորվել, ընդգրկվել ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և ուսանողական այլ կազմակերպություններում:

Միևնույն ժամանակ դուք պարտավոր եք կատարել ուսումնական հաստատության կանոնադրությամբ և ներքին կարգապահության կանոններով սահմանված պարտականությունները: Մահմանված պարտականությունները խախտելու դեպքում ձեր նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր՝ ընդհուպ մինչև ուսումնական հաստատությունից հեռաց-

8. **ակադեմիական արձակուրդը** սովորողի տարեկետման իրավունքի իրացումն է, որը բացի նպատակային արձակուրդի դեպքերից (հոլիության և հետծննդյան շրջանի, գինձառայության) առողջության կամ այլ բացառիկ դեպքերում տրամադրվում է մինչև 1 տարի ժամկետով:

նելը՝ ներքին ակտերով սահմանված դեպքերում և կարգով: Սակայն արգելվում է սովորողներին հեռացնել հիվանդության, արձակուրդների, սկադեմիական արձակուրդի կամ հղիության և ծննդաբերության արձակուրդի ընթացքում:

Եթե դուք ասպիրանտ եք, հայցորդ կամ դոկտորանտ ապա ընտրված գիտական թեմաների, գիտական հետազոտությունների հետ կապված աշխատանքների կատարման համար օգտվում եք լաբորատորիաներից, սարքավորումներից, ուսումնամեթոդական կաբինետներից, գրադարաններից, գործուղումների իրավունքից՝ գիտամանկավարժական և գիտական աշխատողներին հավասարապես:

Եթե դուք ասպիրանտուրայում ուսումնառել և ավարտել եք պետական պատվերի շրջանակներում, ապա պարտավոր եք առնվազն 3 տարի աշխատել բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող ուսումնական կամ գիտական կազմակերպություններում: Այդ մասին դուք տեղեկացվում եք հետբուհական կրթության համար դիմելու ժամանակ, և ուսումնական հաստատությունը ձեզ հետ կնքում է համապատասխան պայմանագիր:

Անվճար կրթության երաշխիքները. ուսման վարձավճարները, ուսանողական նպաստ, կրթաթոշակ

Համաձայն ՀՀ Սահմանդրության 39-րդ հոդվածի՝

«...Յուրաքանչյուր ոք ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք՝ օրենքով սահմանված կարգով»:

Պետությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆինանսական և այլ աջակցություն է ցուցաբերում բարձրագույն և այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին: Իսկ համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝

«Պետությունն իր քաղաքացիների համար երաշխավորում է պետական ուսումնական հաստատություններում անվճար ընդհանուր միջնակարգ և մրցութային կարգով՝ անվճար նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն»:

Համաձայն «Բարձրագույն մասնագիտական և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 14-րդ հոդվածը 6-րդ կետի՝

«ՀՀ կառավարությունը սահմանում է պետական պատվեր՝ ըստ մասնագիտությունների և ուսումնական հաստատությունների: Ըստ իջեցված պատվերի քանակի, սահմանվում է նաև վճարովի և անվճար տեղերի քանակը»:

Իսկ եթե դուք սովորում եք հաստատված տեղերի քանակին համապատասխան պատվերի շրջանակում, ապա անկախ ուսումնառության համակարգից (անվճար, վճարովի, առանց տարկետման իրավունքի՝ վճարովի), պետության կողմից ձեր կրթական ծառայությունների դիմաց վարձավճարի փոխհատուցումը տրվում է ուսանողական նպաստի տեսքով:

Հիշեք, ուսման վճարի փոխհատուցում նպաստի ձևով տրվում է այն ուսանողին, ով մրցույթի արդյունքներով ընդունվել է մասնագիտական ուսումնական հաստատություն, ուսումնական տարվա երկու կիսամյակների արդյունքներով ցուցաբերել է բարձր առաջադիմություն, սոցիալապես անապահով է:

Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է՝

ա) մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով: Մրցույթն, ըստ էության, պայմանական հասկացություն է՝ գնահատականների հիման վրա ռոտացիայի կիրառում, որը հաստատում է ուսումնական հաստատության ռեկտորատը՝ հիմք ընդունելով պետական պատվերի շրջանակում տվյալ մասնագիտությանը հատկացված անվճար տեղերի քանակը: Ուսանողների գնահատականների արդյունքներով վերին սանդղակում գտնվող ուսանողները պահպանվում կամ տեղափոխվում են անվճար համակարգ,

բ) օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերին՝

- առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի: Այդ դեպքում նպաստները տրամադրվում են 1-ին կուրսից մինչև տվյալ մասնագիտական ծրագրի (մասնա-

գետ, բակալավր, մագիստրոս և այլն) ավարտը:

- 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց՝ համաձայն «ՀՀ հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի,
- զոհված զինծառայողի զավակ-ուսանողներին, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին՝ համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի: Այդ դեպքում նպաստները համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում տրվում են 1-ին կուրսի սկզբում և վերանայվում յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում:

զ) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին: Օրինակ՝ սահմանամերձ շրջանների համար պատրաստվող մանկավարժները կամ բուժաշխատողները, համակարգչային ծրագրավորողները և այլն: Այդ դեպքում նպաստներ տրամադրվում են 1-ին կուրսից մինչև ծրագրի ավարտը:

Ի դեպ, առաջին կուրսում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրամադրվում է ՀՀ պետական ԲՈՒՀ-երի ընդունելության կանոններով սահմանված կարգով ընդունված ուսանողներին: Հաջորդ կուրսերում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրվում է 1 ուսումնական տարվա քննությունների և ստուգաթյուների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով:

Բարձրագույն ուսումնական հաստատությունը, վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողական համակազմի առնվազն 10 տոկոսին՝ ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հաշվառմամբ, իր միջոցների հաշվին ուսման վճարը ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցում է՝

ա) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին,

բ) միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին,

գ) 3 և ավելի անչափահաս կամ 3 և ավելի ուսանող երեխաներ ունեցող

ընտանիքների ուսանողներին,

- դ) վճարովի ուսուցման համակարգում 2 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին,
- ե) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամ ծնողներ ունեցող ուսանողներին,
- զ) հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների զավակ-ուսանողներին,
- է) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին,
- ը) ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ բուհի հայեցողությամբ,
- թ) բուհի հայեցողությամբ՝ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին:

Ուսանողական նպաստներ տալու մասին դիմումներն ընդունվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը ընկած ժամանակահատվածում: Եթե ուսանողական նպաստների համակարգում ընդգրկվելու համար ձեր տվյալները չեն բավարարում կամ տեղերը սահմանափակ են, ապա բարձր և դրական այլ ցուցանիշների հիման վրա կարող եք օգտվել կրթաթոշակի հնարավորությունից: Կրթաթոշակը կարող է լինել թե՛ պետական, թե՛ ոչ պետական:

Համաձայն ՀՀ կառավարության 2006թ.-ի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը» N 1183-Ն որոշման՝ ուսանողներին պետական կրթաթոշակ է տրվում գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար (արվեստի բնագավառի բուհերում՝ նաև մասնագիտական մրցույթ-ստուգատեսների հաղթողներին): Պետությունն ուսումնական հաստատությունների համար նախատեսված միջոցների սահմաններում, քստ բուհերի, հաստատում է պետական կրթաթոշակների թիվը և չափը:

Ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներն են՝

- ա) մասնակցությունը ֆակուլտետի և բուհի ուսանողական, հասարակական աշխատանքներին,
- բ) զեկուցումներ, ռեֆերատներ, հրատարակած աշխատանքներ (գիտական ամսագրերում և զանգվածային լրատվության միջոցներում),
- գ) մասնակցությունը միջբուհական, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գի-

տական մատաչրջաններին,

դ) այլ հասարակական և ստեղծագործական նախաձեռնություններ՝ ԲՈՒՀ-ի հայեցողությամբ:

ՈՒսանողին պետական կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին: Դուք կարող եք ընդգրկվել նաև ուսումնական հաստատության կամ նրա սոցիալական գործընկերոջ կողմից սահմանված անվանական կրթաթոշակառուների կազմում:

Եթե դուք ոչ թե սովորում, այլ աշխատում եմք մասնագիտական ուսումնական հաստատությունում, ապա դուք իրավունք ունեք՝

- ազատորեն ընտրել դասավանդվող ուսումնական նյութի շարադրման և դասավանդման մեթոդները՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան,
- ազատորեն և սեփական նախաձեռնությամբ ընտրել և մշակել հետազոտական թեմաներ,
- ընտրել և ընտրվել համապատասխան պաշտոններում և կառավարման համապատասխան մարմիններում,
- մասնակցել ուսումնական հաստատության գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը,
- օգտվել գրադարանների, տեղեկատվական պահոցների, ուսումնական և գիտական ստորաբաժանումների, ինչպես նաև սոցիալ-կենցաղային, բուժական և կառուցվածքային այլ ստորաբաժանումների ծառայություններից,
- մասնագիտական գործունեության համար ունենալ կազմակերպական և նյութատեխնիկական պայմաններ,
- բողոքարկել ղեկավարի հրամանները և կարգադրությունները:

Միևնույն ժամանակ դուք պարտավոր եք՝

- ապահովել կրթական և գիտական գործընթացների արդյունավետությունը,
- պահպանել ուսումնական հաստատության կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները,
- սովորողների մեջ ձևավորել մասնագիտական որակներ, պատշաճ վարք ու վարվելակերպ, քաղաքացիական դիրքորոշում, հայրենասիրություն,

- սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ,
- ոչ պակաս, քան 5 տարին մեկ, սահմանված կարգով անցնել վերապատրաստում կամ որակավորման բարձրացում:

Ուսումնական հաստատությունն իր ունեցած և աշխատողների աշխատանքի վարձատրության համար նախատեսված միջոցների սահմաններում ինքնուրույն է որոշում աշխատանքի վարձատրության ձևը և համակարգը, լրավճարների, հավելումների, պարգևատրումների և նյութական խրախուսման այլ միջոցների չափերը, ինչպես նաև բոլոր տարակարգերի աշխատողների աշխատավարձի դրույքաչափերը՝ առանց աշխատավարձի առավելագույն դրույքաչափեր սահմանելու:

Չեր աշխատավարձի աշխատավարձի դրույքաչափը վճարվում է աշխատանքային պայմանագրով նախատեսված գործառական պարտականությունների և աշխատանքների կատարման համար:

Ա.5 Տեղեկատվության ազատությունը զբաղվածության ապահովման ոլորտում

Անկախ այն հանգամանքից՝ դուք ունեք մասնագիտական կրթություն, թե ոչ, իրավունք ունեք լինել զբաղված, այսինքն՝ կատարել աշխատանք: Զբաղվածություն է համարվում՝

1. գործատուների մոտ վարձու աշխատանքային գործունեությունը (այդ թվում՝ ՀՀ օրենքներով նախատեսված ծառայությունների կադրերի ռեզերվում գտնվելը, բացառությամբ վարձատրություն չնախատեսող դեպքերի),
2. գործատուի աշխատանքային գործունեությունը,
3. անհատ ձեռնարկատիրական գործունեությունը,
4. ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունը,
5. ուսումնական հաստատություններում, մասնագիտական ուսուցման դասընթացներում և ուսուցման այլ ձևերում առկա ուսուցումը:

Համաձայն աշխատանքային օրենսգրքի 200-րդ հոդվածի՝ «1. Հանրակրթական, միջնակարգ-մասնագիտական կամ ԲՈՒՀ-ում սովորող աշխատողին ուսումնական արձակուրդի համար վճարում է գործատուն՝ յուրաքանչյուր օրվա համար աշխատողի միջին օրական աշխատավար-

ձից ոչ պակաս չափով, եթե գործատուն աշխատողին գործուղել է սովորելու:

2. Ընդունելության քննություններ հանձնող կամ անձնական նախաձեռնությամբ սովորող աշխատողների ուսումնական արձակուրդի վճարման հարցը կարող է կարգավորվել կոլեկտիվ պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ»:

Իսկ եթե դուք, լինելով աշխատունակ և գործունակ, չունեք և փնտրում եք աշխատանք և չեք ստանում որևէ կենսաթոշակ (բացառությամբ կերակրողին կորցնելու դեպքի), ինչպես նաև՝ աշխատանքի տեղավորման նպատակով հաշվառված եք Ձբաղվածության պետական ծառայությունում, պատրաստակամ եք անցնելու հարմար աշխատանքի և ստացել եք գործագուրկի կարգավիճակ, ապա համարվում եք գործագուրկ:

Հիշեք, որ կրթություն ստանալու և չաշխատելու ընթացքում դուք գործագուրկ չեք համարվում:

Դուք կարող եք զբաղվածության պետական ծառայություն դիմել՝

- աշխատանքի տեղավորման,
- ազատ աշխատատեղերի վերաբերյալ տեղեկություններ ստանալու,
- մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն ստանալու,
- մասնագիտական ուսուցման և վերապատրաստում ստանալու,
- որպես գործագուրկ հաշվառվելու կամ հաշվառումից դուրս գալու հարցերով:

Եթե դուք ընդգրկվել եք մասնագիտական ուսուցման դասընթացներում, ժամանակավոր կամ վարձատրվող հասարակական աշխատանքներում, ապա այդ ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ձեր գործագուրկի կարգավիճակը կասեցվում է և վերականգնվում դրանց ավարտին հաջորդող օրվանից:

Ձբաղվածության պետական ծառայությունը տեղեկատվություն տնօրինող մարմին է, հետևաբար, դուք կարող եք ստանալ տեղեկություններ՝

- թափուր աշխատատեղերի, սպասվելիք կառուցվածքային փոփոխությունների և այլ միջոցառումների մասին, որոնց հետևանքով կարող են տեղի ունենալ աշխատանքից ազատումներ՝ ըստ տեղական և օտարերկրյա գործատուների տվյալների,

- թափուր աշխատատեղերի առկայության ղեպքում համապատասխան գործատուի մոտ ուղեգրվելու պայմանների մասին,
- զբաղվածության ամենամյա պետական ծրագրերի համար հատկացված միջոցների օգտագործման մասին,
- աշխատաշուկայի վիճակի մասին՝ հինք ընդունելով աշխատուժի առաջարկի ու պահանջարկի վերլուծական հետազոտությունները և կանխատեսումները,
- նախնական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում անվճար ուսուցանվող մասնագիտությունների վերաբերյալ առաջարկությունների մասին,
- աշխատուժի արտաքին և ներքին տեղաշարժի կարգավորմանն ուղղված ծրագրերի մասին,
- զբաղվածության ամենամյա պետական ծրագրերի և դրանց ապահովման մասին,
- գործազուրկների շրջանում կազմակերպվող մասնագիտական ուսուցումների մասին,
- այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկների նյութական ծախսերը հատուցելու պայմանների մասին,
- գործազուրկներին և հաշմանդամներին ձեռնարկատիրական գործունեության պետական գրանցման համար տրամադրվող ֆինանսական աջակցության մասին,
- երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված անձանց վերամասնագիտացում կազմակերպելու մասին,
- վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ հավելյալ աշխատուժի մասին,
- առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկի մահվան ղեպքում նախատեսված թաղման նպաստը վճարելու վերաբերյալ:

Զբաղվածության պետական ծառայությունը հրապարակայնություն և ապահովելու նպատակով իրավասու է՝

- լրատվամիջոցներով հրապարակել տեղեկատվություն՝ (տարեկան ոչ պակաս, քան 2 անգամ) զբաղվածության կարգավորման ամենամյա ծրագրերի համար ծախսված ֆինանսական միջոցների մասին,

- հանրապետական և տարածքային համաձայնեցման կոմիտեների ներկայացուցիչներին գրավոր հարցման հիման վրա տրամադրել տեղեկատվություն՝ զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրերի իրականացման մասին,
- տրամադրել տեղեկություն և իրականացնել խորհրդատվություն օտարերկրյա պետություններում աշխատանքային գործունեություն ծավալելու և մասնագիտական ուսուցման ցանկություն ունեցող անձանց,
- իրականացնել միջնորդություն աշխատանք փնտրող անձի և օտարերկրյա պետությունների գործատուների միջև,
- հրապարակել տեղեկություններ աշխատուժի շուկայի վիճակի մասին՝ հիմք ընդունելով աշխատուժի առաջարկի ու պահանջարկի վերլուծական հետազոտությունների և կանխատեսումների արդյունքները,
- իրականացնել աշխատանք փնտրող անձանց մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն,
- ՁԼՄ-ներով պարբերաբար հրապարակել տեղեկատվություն՝ թափուր աշխատատեղերի մասին:

Հիշեք, Չբաղվածության պետական ծառայության կողմից բնակչությանը և գործատուներին մատուցվող ծառայությունները տրամադրվում են անվճար: Իսկ ծառայության ուղեգրերն աշխատանք փնտրող անձի և գործատուի միջև կրում են միջնորդային բնույթ:

Այսինքն, ձեզ աշխատանքի ընդունելու որոշումը պետք է կայացնի գործատուն՝ անշուշտ ունենալով ձեր համաձայնությունը: Դուք մույնպես ձեր հերթին պարտավորված չեք համաձայնվել այդ աշխատանքին միայն նրա համար, որ ներկայացել էք Չբաղվածության ծառայության ուղեգրի հիման վրա:

Տեղեկատվության ազատությունը՝ զբաղվածության ասպահովման պետական կարգավորման համակարգերում

Աշխատանքային զբաղվածություն ունենալու համար երբեմն գործատուի և ձեր ցանկությունն ու համաձայնությունը կարող է բավարար մասնապայման չլինել հիմնական աշխատանքային պայմանագիր կնքելու, աշխատանքային հարաբերություններ ձևավորելու համար: Այդ գործում իր կարգավորիչ մասնակցությունն է ունենում պետությունը՝ օրենքի ուժով առանձին աշխատանքային զբաղվածության դեպքերի համար սահմանելով լիցենզավորման կամ ատեստավորման պայմանը:

Փորձենք մանրամասնել, եթե դուք որոշել եք զբաղվել կոնկրետ աշխատանքային գործունեությամբ, ապա խորհուրդ է տրվում «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով և տվյալ ոլորտը կարագավորող այլ օրենքով ճշտել, թե արդյոք տվյալ գործունեության տեսակը չի պահանջում գործունեության թույլտվություն՝ լիցենզիա: Ի դեպ, լիցենզավորումը լինում է պարզ՝ այսինքն առանց մրցույթի կամ բարո՝ մրցութային ընթացակարգերով: Դրանց ամփոփ նկարագրությանը կարող եք ծանոթանալ «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածում: Թվարկենք մի շարք մասնագիտական գործունեության տեսակներ, որոնք կարող են հետաքրքրել ձեզ և ենթակա են լիցենզավորման.

- կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացում,
- արտարժույթի դիլերային բրոքերային առուվաճառք,
- գրավատների կազմակերպում,
- ինկասացիոն ծառայությունների մատուցում,
- ապահովագրական բրոքերային գործունեություն,
- մաքսային միջնորդական գործունեություն,
- մաքսային փոխադրողի գործունեություն,
- վիճակախաղերի, շահումներով խաղերի կազմակերպում,
- Ինտերնետ շահումով խաղերի կազմակերպում,
- խաղատների կազմակերպում,
- ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպում,
- մարդատար-տաքսի ավտոմոբիլներով փոխադրումներ,
- ուղևորափոխադրումների կազմակերպում,
- զբոսավարի գործունեություն, բացառությամբ այն անձանց գործունեության, ովքեր այս գործունեությունն իրականացնում են բացառապես այն զբոսաշրջային օբյեկտի սահմաններում, որի աշխատողն են,
- ուղեկցողի գործունեություն, բացառությամբ այն անձանց գործունեության, ովքեր ուղեկցողի գործունեություն են իրականացնում բացառապես այն զբոսաշրջային օբյեկտի սահմաններում, որի աշխատողն են,
- աուդիտորական ծառայությունների իրականացում:

Երկրորդ ձևը, որով պետությունը ձեր աշխատանքային գործունեության հարցում ցուցաբերում է կարգավորիչ և մասնակցային գործառնություն՝ առնչվում է հանրային ծառայության համակարգի հետ, որի նպատակն է պետական իշխանության մարմիններին օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացումը: Եթե դուք հավակնում եք աշխատել պետական համակարգում, ապա ձեր զբաղվածությունը հնարավոր կլինի միայն ծառայության համապատասխան ատեստավորում անցնելուց և դասային աստիճան ստանալուց հետո:

Հանրային ծառայության բոլոր բաղադրիչներում՝ քաղաքացիական, հատուկ, համայնքային և այլ ծառայությունների դեպքում հիմնական սկզբունքներից մեկը հրապարակայնությունն է: Հետևաբար՝ ամբողջ գործընթացը պետք է կազմակերպվի այդ սկզբունքից ելնելով: Գործընթացը կարելի է բաժանել 2 բաղադրիչների՝ թափուր պաշտոնների համալրում՝ արտամրցութային կամ մրցութային կարգով և ատեստավորում՝ փաստաթղթային, թեստավորման և հարցազրույցի միջոցով: Գործընթացը դիտարկենք քաղաքացիական ծառայության օրինակով.

Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն գրադեցվում է արտամրցութային կարգով կամ մրցությոով:

Եթե պետական մարմնում առաջացել է թափուր պաշտոն, ապա մեկշաբաթյա ժամկետում այդ պաշտոնը կարող է համալրվել՝ տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի նշանակումով: Արտամրցութային կարգով թափուր պաշտոնը կարող է համալրվել երկու տարբերակով՝

- դա կարող է լինել այն քաղաքացիական ծառայողը, ով միաժամանակ՝
 - ա) բավարարում է տվյալ թափուր պաշտոնի անձնագրի պահանջները,
 - բ) համարվում է քաղաքացիական ծառայության միեւնույն խմբի պաշտոն զբաղեցնող կամ առնվազն ունի տվյալ թափուր պաշտոնի համար նախատեսված քաղծառայության դասային աստիճան կամ զբաղեցնելու է քաղծառայության իր զբաղեցրած խմբին հաջորդող բարձր խմբի 3-րդ կամ 2-րդ ենթախմբերի, իսկ բարձրագույն պաշտոնների խմբի դեպքում՝ 2-րդ ենթախմբի պաշտոն,
 - գ) համարվում է կոնկրետ կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայող,
 - դ) այդ մասին տվել է գրավոր համաձայնություն:

- Մյուս դեպքում տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմնի) հայեցողությամբ և Քաղծառայության խորհրդի համաձայնությամբ այդ պաշտոնը կարող է արտամրցութային կարգով զբաղեցնել միայն քաղծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվից տվյալ պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող անձը:

Եթե կազմակերպությունում առաջացել է թափուր տեղ, և սահմանված կարգով և ժամկետներում նշանակում չի կատարվել, ապա աշխատակազմի ղեկավարը եռօրյա ժամկետում այդ մասին գրավոր տեղեկացնում է Քաղծառայության խորհրդին: Այսինքն, արտամրցութային կարգով թափուր պաշտոնը չհամալրվելու դեպքում, այդ պաշտոնը զբաղեցվում է մրցութային կարգով: Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակվում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի եւ զանգվածային լրատվության այլ միջոցներով:

Ի դեպ, մրցույթն անցկացվում է նույնիսկ մեկ մասնակցի առկայության դեպքում: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորումը կարող է անցկացվել համակարգչի միջոցով կամ գրավոր: Թեստերը կազմվում են Քաղծառայության խորհրդի սահմանած կարգով՝ համակարգչում գետեղված հարցաշարից և դրանցից պատահական ընտրված հարցերից՝ մասնակիցների գիտելիքները հետեյալ բնագավառներում ստուգելու համար.

- ա) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության,
- բ) քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրության,
- գ) համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող ՀՀ օրենսդրության մասնագիտական հարցեր:

Համակարգչում գետեղված հարցաշարը, ոչ ուշ, քան մրցույթն անցկացնելուց մեկ ամիս առաջ, պետք է հրապարակվի: Թեստավորման առաջադրանքները բաղկացած են հարցերից և խնդիրներից: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա 3 կամ 4 ենթադրյալ պատասխան, սակայն 1 ճիշտ պատասխան: Թեստավորման փուլն անցկացվում է մասնակիցների համար կողերի կիրառմամբ:

Մրցույթի երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում թեստավորման առաջադրանքների առնվազն իննսուն տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցները: Հարցազրույցն անցկաց-

վում է հարցատոմսերով՝ քաղձառայության տվյալ պաշտոնի անձնագրի դրույթների շրջանակներում նրանց գործնական կարողություններն ստուգելու նպատակով:

Հիշեք, մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթի անցկացնելուց հետո՝ նույն օրը:

Մրցույթի արդյունքները հրապարակվելուց հետո դրանք կարող են մասնակցի կամ մրցութային հանձնաժողովի անդամի կողմից գրավոր բողոքարկվել: Գրավոր բողոք ներկայացնելու, դա քննության առնելու և որոշում կայացնելու կարգն ու ժամկետները սահմանում է Քաղաքացիական ծառայության խորհուրդը: Ձեզ մրցույթում հաղթող ճանաչելու դեպքում, մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո, եթե դուք գրավոր բողոք չունեք, այդ մասին եզրակացությունն ուղարկվում է համապատասխան մարմնին, և 3 աշխատանքային օրվա ընթացքում ձեզ նշանակում են համապատասխան պաշտոնում: Եթե մրցույթի մասնակցներից ոչ մեկը թեստավորման առաջադրանքների առնվազն 90 տոկոսին ճիշտ չի պատասխանել կամ հարցազրույցի մասնակցներից ոչ մեկը քվեարկության արդյունքում չի հավաքել մրցութային հանձնաժողովի՝ քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայներ ու մրցույթի արդյունքում հաղթող չի ճանաչվել, ապա անցկացվում է նոր մրցույթ: Կրկնակի մրցույթի ժամանակ մրցութային մասնակցելու համար նոր դիմումներ չեն ընդունվում, և այն անցկացվում է 10-օրյա ժամկետում ընդհանուր հիմունքներով:

Եթե դուք արդեն աշխատող եք կամ որոշել եք տեղափոխվել նույն համակարգի այլ աշխատանքի, ապա պետք է անցնեք ատեստավորում: Ատեստավորման ենթակա լինելու դեպքում այդ մասին ձեզ տեղեկացվում է ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ: Սակայն ատեստավորում անցկացնելու օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ դուք պետք է ծանոթանաք ձեր ծառայողական բնութագրին:

Հիշեք, որ ատեստավորումն անցկացվում է ձեր անմիջական մասնակցությամբ: Ատեստավորում կարող է լինել հերթական և արտահերթ: Հերթական ատեստավորումն անցկացվում է երեք տարին մեկ անգամ, իսկ հերթականը՝ ձեզ նշանակող անձի պաշտձառաքանված որոշման հիման վրա:

Ատեստավորման ենթակա չեն՝

- ա)** տվյալ պաշտոնը 3 տարուց պակաս ժամկետով զբաղեցնող քաղծառա-
յողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել,
- բ)** հղի և մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում
գտնվող քաղծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտ-
նել, իսկ արձակուրդից վերադառնալուց հետո կարող են ատեստա-
վորվել՝ ոչ շուտ, քան 1 տարի հետո, եթե ավելի վաղ ատեստավորվե-
լու ցանկություն չեն հայտնել,
- գ)** պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձած քաղծա-
ռայողները՝ վերադառնալուց հետո 1 տարվա ընթացքում, եթե նրանք
նման ցանկություն չեն հայտնել:

Եթե դուք ենթակա եք ատեստավորման, սակայն գտնվում եք արձակուր-
դում, գործուղման կամ ժամանակավոր անաշխատունակության մեջ,
ապա աշխատանքի ներկայանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում ենթա-
կա են ատեստավորման: Եթե դուք ենթակա եք ատեստավորման, ապա
այդ մասին մեկ ամիս առաջ տեղեկացվում եք, իսկ դրանից առնվազն 2 շա-
բաթ առաջ ձեր անմիջական ղեկավարը (առկայության դեպքում) ներկա-
յացնում է ձեր ծառայողական բնութագիրը, որին պետք է ծանոթանաք
ատեստավորում անցկացնելու օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ:
Ատեստավորումն անցկացվում է հետևյալ եղանակներով.

ա) փաստաթղթային,

բ) թեստավորման և հարցազրույցի:

Եթե դուք ունեք տվյալ պաշտոնի առավելագույն դասային աստիճան,
ապա ենթակա եք փաստաթղթային ատեստավորման: Փաստաթղթային
ատեստավորումն անցկացվում է ծառայողական բնութագրի հիման
վրա՝ հարցազրույցի միջոցով: Այն անցկացվում է հարցատոմսերով՝ ձեր
պաշտոնի անձնագրի դրույթների շրջանակներում ձեր գործնական կա-
րողություններն ստուգելու նպատակով: Փաստաթղթային ատեստավոր-
ման արդյունքում ատեստավորման հանձնաժողովն ընդունում է հետևե-
լալ որոշումներից մեկը.

ա) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին,

բ) ենթակա է ատեստավորման թեստավորման և հարցազրույցի միջոցով:

Թեստավորումը կարող է անցկացվել համակարգչի միջոցով կամ գրա-
վոր: Թեստերը կազմում, հարցազրույցն անցկացնում և արդյունքները

զնահատում է ատեստավորման հանձնաժողովը՝ ատեստավորման վերջը նշված ընթացակարգով:

Ա.6 Տեղեկատվության ազատության իրավունքը աշխատանքային հարաբերություններում

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 43-րդ և 130-րդ հոդվածների՝ դուք իրավունք ունեն ստանալու աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ օրենքով չարգելված ցանկացած տեղեկատվություն՝

1. գործատուի ներկա և ապագա գործունեության մասին,
2. զբաղվածության հնարավոր փոփոխությունների մասին,
3. աշխատողների թվաքանակի հնարավոր կրճատումների դեպքում իրականացվելիք միջոցառումների մասին,
4. աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ, եթե այդ տեղեկությունները պետական, ծառայողական կամ առևտրային գաղտնիք չեն համարվում:

Ցանկացած դեպքում տեղեկության տրամադրման կարգը և պայմանները սահմանվում են կողմերի համաձայնությամբ: Չեր ցանկությամբ գործատուն պարտավոր է տրամադրել տեղեկանք աշխատանքային գործառույթների, աշխատավարձի, վճարված հարկերի ու պետական սոցիալական ապահովագրության վճարումների չափի և աշխատանքի գնահատականի վերաբերյալ: Հաճախ սահմանված պետական երաշխիքների մասին տեղեկությունները բավարար չափով չեն հրապարակվում, կամ կողմերը դրանց բավարար իրագեկված չեն: Արդյունքում՝ ձեզ օրենքով վերապահված իրավունքները չեն իրացվում: Ներկայացնում ենք այն անհրաժեշտ տեղեկությունները, որոնք կարող են նպաստել ձեր անվտանգ և լիարժեք աշխատանքային հարաբերությունների իրականացմանը և պաշտպանությանը:

- Եթե զբաղեցնում եք քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն, կամ այլ պետական (հատուկ) ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողի՝ բարձրագույն խմբի և գլխավոր խմբի առաջին ենթախմբի պաշտոն, ապա ձեր զբաղվածությունն արտաժամյա⁹ չի համարվում, քանի որ տվյալ դեպքում ձեր աշխատանքային օրը նորմավորված չէ (*Աշխատանքային օրենսգրքի 144-րդ հոդված*):

- Գործատուն պարտավոր է վտանգավոր գործոնների ազդեցության ռիսկի վերացման նպատակով ձեռնարկել ժամանակավոր միջոցներ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ բարելավել ձեռնարկված աշխատանքային պայմանները: Եթե պայմանների փոփոխությամբ հնարավոր չէ վերացնել վտանգը, ապա գործատուն պարտավոր է, ձեռնարկված աշխատանքային պայմաններում, նույն կազմակերպությունում ձեռնարկված աշխատանքի (Աշխատանքային օրենսգրքի հոդվածներ 117-րդ և 258-րդ, 1-ին, 2-րդ և 3-րդ մասեր):

Աշխատանքային հարաբերություններում կողմերի համաձայնությամբ գործելու հիմքերը հաճախ է սահմանվում, սակայն կիրառության մեջ միշտ չէ, որ դա պահպանվում է:

Այսպիսով՝ ձեռնարկված աշխատանքային կարող են՝

- կնքվել աշխատանքային պայմանագրեր, ինչպես նաև սահմանվել փորձաշրջան,
- փոփոխվել աշխատանքային պայմանները, պայմանագրի պայմանները և ժամկետները,
- լուծարվել պայմանագիրը կամ կասեցվել դրա որևէ դրույթը, ինչպես նաև վերջնահաշվարկը,
- որոշվել հաշտեցման հանձնաժողովի անդամների ընդհանուր թիվը,
- որոշվել միջնորդի մասնակցությամբ կողմերի միջև աշխատանքային վեճի քննարկման կարգը,
- տեղափոխվել այլ աշխատանքի՝ աշխատանքային իրավիճակի փոփոխության ցանկացած դեպքում,
- սահմանել ոչ լրիվ աշխատանքային օր կամ շաբաթ, դրա վարձատրության կարգը,
- ներգրավել արտաժամյա աշխատանքի կամ հերթապահության,
- որոշվել արձակուրդի տրամադրումը, այդ թվում՝ հավելյալ, անվճար, արձակուրդի տեղափոխումը,
- ավելի ցածր վարձատրությամբ աշխատանքի տեղափոխումը,
- սահմանվել աշխատավարձի սահմանումը և տրամադրումը,
- սահմանվել ուսումնական արձակուրդի վճարման կարգը,
- որոշվել ձեռնարկված աշխատանքային գործիքների օգտագործման և փոխհատուցման տարբերակները:

ԲԱԺԻՆ Բ

Ինչպե՞ս ստանալ տեղեկատվություն

Բ.1 Ինչպե՞ս դիմել և ի՞նչ ժամկետներում ստանալ անհրաժեշտ տեղեկությունը

Անհրաժեշտ տեղեկությունները հիմնականում հրապարակվում են՝ տեսանելի, մատչելի վայրերում փակցնելու, լրատվամիջոցներով հայտարարելու, ինտերնետային էջում տեղադրելու, ինչպես նաև՝ դրանց ուղղակիորեն ծանոթացնելու, պատճենելու և այլ ձևերով հրապարակային դարձնելու միջոցով: Հետևաբար, դուք կարող եք ձեռք բերել անհրաժեշտ տեղեկությունը՝ իմանալով, թե որ լիազոր մարմինն է այն տնօրինում:

Անհրաժեշտ տեղեկություններ ստանալու համար կարող եք նաև դիմել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր հարցումով: Խորհուրդ ենք տալիս հնարավորության և ժամանակի առկայության դեպքում դիմել գրավոր (*տես՝ Տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձևը, էջ 43*): Այս կերպ, եթե ձեզ հետազայում մերժեն կամ ուշացնեն պատասխանը, դուք մերժումը բողոքարկելու հիմք կունենաք: Եթե գրավոր հարցումն ուղարկում եք փոստով, ապա խորհուրդ ենք տալիս հարցումն ուղարկել պատվիրված փոստի միջոցով. փոստային անդորրագիրը ձեզ հնարավորություն կտա հետազայում ապացուցել, որ հարցումն իսկապես ուղարկվել է սվյալ մարմին: Գրավոր հարցումը կարող եք ուղարկել ինչպես ձեռ, այնպես էլ ձեր շահերը ներկայացնող կազմակերպության անունից (համապատասխան բլանկի վրա), քանի որ տեղեկություն ստանալու իրավունք ունեն ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք:

Տեղեկություն ստանալու բանավոր և գրավոր հարցումներ

- **Բանավոր հարցում**

Գործնականում տեղեկություն ստանալու համար քաղաքացիները հիմնականում դիմում են բանավոր, որի դեպքում կան ստանում են անհրաժեշտ տեղեկությունը, կան ամենատարբեր պատճառներով մերժվում են, որոնց մեծ մասն անօրինական է: Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի՝ բանավոր հարցմամբ դիմողը պարտավոր է նախապես հայտնել իր անունը և ազգանունը, և այն կազմակերպությունը (առկայության դեպքում), որը նա ներկայացնում է:

Բանավոր դիմելիս նախ պետք է պարզել, թե ո՞ր պաշտոնյան է պատասխանատու տվյալ տեղեկությունը տրամադրելու համար: Այնուհետ կարող եք անմիջապես դիմել՝ նշելով, թե ինչ տեսքով կամ կրիչի վրա եք ուզում ստանալ տեղեկությունը՝ տեսնել կամ կարդալ փաստաթուղթը, դրանից բաղվածքներ կատարել, ստանալ դրա պատճենը՝ թղթի, պնակիտի կամ խտասալիկի վրա ամրագրված:

Բանավոր հարցման պատասխանը տրվում է բանավոր՝ հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում: Եթե բանավոր հարցմամբ դիմողը չի հայտնում իր անունը և ազգանունը, և (կամ) բանավոր հարցումը չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա տեղեկատվություն տնօրինողը կարող է չպատասխանել բանավոր հարցմանը:

● **Գրավոր հարցում**

Անձը կամ կազմակերպությունը կարող է ներկայացնել նաև գրավոր հարցում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով (հոդված 9) սահմանված են գրավոր հարցմանը ներկայացվող պահանջները:

Գրավոր հարցման մեջ դիմողը պարտադիր պետք է նշի.

- իր անունը, ազգանունը,
- բնակության հասցեն կամ իր ներկայացրած կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը,
- Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի:

Այս պահանջները չբավարարելու դեպքում հարցումը կարող է վերացվել կամ դրան ընդհանրապես ընթացք չտրվել: Գրավոր անստորագիր հարցումը ենթակա է ոչնչացման: Բոլոր դեպքերում անձը պարտավոր չէ հիմնավորել, թե իրեն ինչու է անհրաժեշտ տվյալ տեղեկությունը, կամ ինչպես է պատրաստվում օգտագործել այն:

Գրավոր հարցման մեջ նախըտրելի է նշել, թե ինչ կրիչի վրա եք ուզում ստանալ տեղեկությունը (թուղթ, դիսկետ, էլեկտրոնային նամակ և այլն): Եթե նյութական կրիչը նշված չէ, ապա այն տրամադրվում է պաշտոնյայի համար նախընտրելի կրիչով:

Որպեսզի տեղեկություն ստանալու ձեր հարցումը չմերժվի հարցումին ներկայացվող օրենքի պահանջները չբավարարելու հիմքով խորհուրդ ենք տալիս օգտագործել հարցման հետևյալ օրինակելի նմուշը:

Մարմնի, կազմակերպության անվանումը
Տեղեկություններ տրամադրող պաշտոնյայի անուն, ազգանունը
Դիմողի անուն, ազգանուն, հայրանունը
/Բնակության, աշխատանքի կամ ուսման վայրի հասցեն/

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պրն/տկն.....,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27-րդ և 27.1-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ _____ մասին:

(հնարավորինս հստակ ձևակերպեք անհրաժեշտ տեղեկությունը)

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը: (Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալ եմ՝

անուն, ազգանուն

ստորագրություն

ամսաթիվ

*Օրինակելի ձևը մշակել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնը:

Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում

1. Տեղեկությունը կամ դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Սա ոչ թե նշանակում է, որ ձեզ պետք է պատասխանեն 5 օր անց, այլ՝ մինչ 5 օրը, ներառյալ՝ անհապաղ:
2. Եթե հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում: Սակայն հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում տեղեկություն տնօրինող մարմինը պետք է գրավոր տեղեկացնի՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնաժամկետը: Հետաձգման մասին պաշտոնական գրությունը պետք է պարունակի՝ հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնաժամկետը:

Հիշեք, որ այս ժամկետը չի կարող գերազանցել 30 օրը:

Առանձին տեղեկությունների տրամադրման համար օրենքը սահմանում է տարբեր ժամկետներ: Բոլոր դեպքերում մարմինը չի կարող անպատասխան թողնել ձեր հարցումը: Դա կոլիտվի որպես տեղեկատվություն ստանալու իրավունքի ոտնահարում և ենթակա է բողոքարկման:

Հնարավոր է, որ հարցումն ուղղեք մի գերատեսչության, որը չունի պահանջվող տեղեկությունը կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը նշում է, որ այս դեպքում հարցումը ստացած մարմինը պարտավոր է տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, ձեզ գրավոր տեղեկացնել այդ մասին, իսկ հնարավորության դեպքում նաև տրամադրել այդ տեղեկատվությունը տնօրինող մարմնի/կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը:

Եթե տեղեկատվություն տնօրինողն ունի փնտրվող տեղեկության միայն մի մասը, ապա նա այն տալիս է դիմողին՝ միաժամանակ, հնարավորության դեպքում, նշում է տեղեկատվության մյուս մասի տնօրինողին:

Բ.2 Պե՞տք է արդյոք վճարել տեղեկության տրամադրման համար

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկության տրամադրման համար վճար չի գանձվում հետևյալ դեպքերում.

1. բանավոր հարցումներին պատասխանելիս,
2. մինչև 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս,
3. տեղեկությունն էլեկտրոնային փոստով տրամադրելիս,
4. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նշված տեղեկությունների տրամադրման մասին գրավոր հարցումներին պատասխանելիս: Դրանք այն տեղեկություններն են, որոնց հրապարակումը կարող է կանխել պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը:

10 էջից ավել տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս տեղեկատուն կարող է գումար պահանջել: Սակայն վճարի չափը չի կարող սահմանվել կամայականորեն: Տեղեկության տրամադրման համար գանձվող վճարը պետք է ներառի միայն այդ տեղեկության տրամադրման տեխնիկական ծախսերը (պատճենահանում, խտասակիկի (պնակիտի) արժեք և այլն):

Բ.3 Ո՞ր տեղեկության տրամադրումը կարող է մերժվել

- Ձեր անձնական կյանքի վերաբերյալ տեղեկություններն անձեռնմխելի են. որևէ մեկը չի կարող հավաքել, պահել կամ հրապարակել դրանք առանց ձեր գիտակցված համաձայնության:
- Ձեր առողջական վիճակի, ընտանեկան և անձնական կյանքի հետ կապված տեղեկությունները համարվում են գաղտնիք և հրապարակման ենթակա չեն: Դրանք տրամադրվում են միայն դատարանի, դատախազության, նախաքննության, հետաքննության մարմինների կա-

րուցած քրեական կամ քաղաքացիական գործերի կապակցությամբ, նաև՝ օրենքով սահմանված դեպքերում, այլ իրավասու մարմինների պահանջով:

Գործատուն աշխատողի անձնական տվյալները մշակելիս պարտավոր է պահպանել հետևյալ պահանջները՝

- տեղեկացնել ձեր անձնական տվյալների ստացման նպատակի, տվյալների ստացման միջոցների և աղբյուրների, բնույթի և ձեր կողմից դրանց ստացման գրավոր համաձայնություն տալը մերժելու հետևանքների մասին: Ձեր անձնական տվյալները պետք է ստացվեն ձեզնից: Եթե դրանք հնարավոր է ստանալ միայն երրորդ անձից, ապա պետք է առկա լինի ձեր գրավոր համաձայնությունը:
- Գործատուն իրավունք չունի ձեռք բերել և մշակել ձեր քաղաքական, կրոնական և այլ համոզմունքների կամ անձնական կյանքի վերաբերյալ տվյալներ: Աշխատանքային հարաբերությունների հետ անմիջականորեն կապված դեպքերում նման տեղեկությունները գործատուն իրավունք ունի ձեռք բերել և մշակել միայն ձեր գրավոր համաձայնությամբ:
- Ձեզ վերաբերող որոշումներ ընդունելիս՝ իրավունք չունի հիմնվել բացառապես ինքնաբերական մշակումից կամ էլեկտրոնային միջոցներից ստացված անձնական տվյալների վրա:
- Գործատուն իր միջոցների հաշվին ապահովում է ձեր անձնական տվյալների օգտագործման օրինականությունը կամ պահպանությունը:
- Ձեր ստորագրությամբ պետք է ծանոթացնի ձեր անձնական տվյալների մշակման կարգին և համապատասխան իրավական ակտերին, ձեր իրավունքներին ու պարտականություններին:

Տեղեկատվության մերժման հիմքերը

Պրակտիկայում հաճախ են պատահում տեղեկատվության տրամադրման անօրինական մերժումներ: Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է իմանալ, թե մերժման ո՞ր հիմքերն են համարվում օրինական: Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի՝ տեղեկատվության տրամադրումը մերժվում է, եթե այն.

1. պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,
2. խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիու-

քյունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը,

3. պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները,
4. բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),
5. խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:

Այսպիսով, տեղեկության տրամադրումը կարող է մերժվել, եթե դրա բացահայտումը վնասում է կամ կարող է վնասել վերոնշյալ շահերից որևէ մեկին: Տեղեկատվության տրամադրումը կարող է մերժվել նաև այդ տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չվճարելու դեպքում:

Մերժման կարգը

Տեղեկության տրամադրման մերժումը պետք է համապատասխանի օրենքով սահմանված պահանջներին: Այն պետք է պարտադիր պարունակի.

- հարցումը մերժելու իրավական հիմքերը՝ հղում անելով օրենքով սահմանված այն կոնկրետ բացառությանը, որին առնչվում է պահանջվող տեղեկատվությունը, նշելով՝ օրենքի որ դրույթի համապատասխան է մերժվում տվյալ տեղեկության տրամադրումը,
- մերժումը բողոքարկելու ժամկետները և կարգը:

Թեև օրենքն ուղղակիորեն չի սահմանել տեղեկատվություն ստանալու ձեր գրավոր հարցման պատասխանը չստանալու դեպքի կարգավորման մասին, այնուամենայնիվ՝ դա նույնպես համարվում է տեղեկություն ստանալու իրավունքի խախտում և պատժվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն:

Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ (*«SU մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետ*):

Հիշեք, հարցման մերժումը պետք է լինի միայն գրավոր: Այն պետք է տրամադրվի 5-օրյա ժամկետում:

ԲԱԺԻՆ Գ

Տեղեկատվություն և խորհրդատվություն ստանալու իրավունքի պաշտպանության երաշխիքները

Գ.1 Պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 3-րդ հոդվածի դրույթները տեղեկատվություն տնօրինողին պարտավորեցնում են՝ տարին առնվազն մեկ անգամ հրապարակել իր գործունեությանն առնչվող հետևյալ տեղեկությունները և դրանցում կատարված փոփոխությունները.

1. հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները և ծառայությունները,
2. բյուջեն,
3. գրավոր հարցումների ձևերը և դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները,
4. հաստիքացուցակները, պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները,
5. աշխատանքի ընդունման կարգը և թափուր աշխատատեղերը,
6. շրջակա միջավայրի վրա ներգործությունը,
7. հասարակական միջոցառումների ծրագրերը,
8. քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը և վայրը,
9. աշխատանքների և ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները),
10. տնօրինվող տեղեկությունների ցանկը և դրանց տնօրինման կարգը,
11. ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը,
12. սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստաց-

ման աղբյուրները,

13. սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները:

Տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձևով, տեղեկատվություն տնօրինողի ինտերնետ-ային էջի առկայության դեպքում՝ նաև դրանով:

Տեղեկատվության մատչելիությունը կարևորագույն սկզբունքներից մեկն է, որից ենթադրվում է, որ դա պետք է կազմված լինի հստակ, պարզ և ընկալելի ձևաչափով և պետք է հրապարակվի, փոխանցվի կամ տրամադրվի՝

- ցուցատախտակների կամ ցուցափեղկերի վրա տեսանելի և ընթերցելի ձևով փակցնելու միջոցով,
- գրքույկներում հրապարակելու և հանրային վայրերում տեղադրելով և տրամադրելով,
- զանգվածային լրատվամիջոցներով իրազեկելով,
- համապատասխան հանրային միջոցառումների ժամանակ բաժանելով,
- և այլ հանրային իրազեկում ապահովող միջոցներով:

Անկախ հրապարակման ձևից, տեղեկատվությունը պետք է պարունակի նաև հետադարձ կապի հնարավորությունը. հեռախոսահամար, հասցե (նաև՝ էլեկտրոնային), պատասխանատու անձ, իրավասու կազմակերպություն կամ լիազորված անձ և այլն:

Երիտասարդության, կրթության, զբաղվածության և աշխատանքի բնագավառներում իրականացվող և ձեզ հետաքրքրող ծրագրերը և միջոցառումները նույնպես հրապարակային են, քանի որ դրանք իրականացվում են համապատասխան Տարեկան ծրագրով սահմանված ժամկետներում և կարգով: Համաձայն «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի, 2009 թվականից բոլոր բյուջետային ֆինանսավորմամբ գերատեսչությունները պարտադիր անցում են կատարելու տարեկան ծրագրերի քաղաքականության մոդելին: Հետևաբար, ձեզ հետաքրքրող բնագավառում նախատեսվող տարեկան ծրագրերի, միջոցառումների պլանին՝ ըստ ֆինանսական կամ ոչ ֆինանսական ցուցանիշներին կարող եք ծանոթանալ «Պետական բյուջեի մասին» տվյալ տարվա օրենքի փաթեթից, որը երկրի ֆինանսական պլանն է ու հաստատվում է Ազգային ժողովի կողմից:

Գ.2 Ինչպե՞ս և ու՞մ բողոքարկել տեղեկություն ստանալու իրավունքը խախտելու դեպքում

Տեղեկատվության անօրինական մերժումը, հարցումն անպատասխան բողոքելը, օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ պատասխանելը, ոչ լիարժեք տեղեկատվություն տրամադրելն անձի իրավունքների ապօրինի սահմանափակման են հանգեցնում, ինչը ենթակա է բողոքարկման: Օրենսդրությամբ սահմանվում է տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության երեք ձև՝ վերանայում վերադասության կարգով, բողոքարկում պետական լիազորված մարմին (մարդու իրավունքների պաշտպանին), բողոքարկում դատական կարգով:

1. Տեղեկություն ստանալու իրավունքի խախտումը կարելի է բողոքարկել խախտումը թույլ տված մարմնի վերադասին:

Դուք կարող եք բողոքել՝ մարմնից պահանջելով ներքին կարգով վերանայել մերժումը: Բողոքի հետ կցեք նաև մարմնից ստացած պատասխան-մերժումը, որը բողոքարկում եք: Եթե վերադասը ուժի մեջ է թողնում մերժումը, ապա կարող եք դիմել Մարդու իրավունքների պաշտպանին կամ դատարան: Ի դեպ, այս մարմիններին կարելի է դիմել նաև առանց վերադասության կարգով բողոքարկելու:

2. Բողոքարկման երկրորդ հնարավորությունը՝ պետական լիազորված անկախ մարմնին դիմելն է:

ՀՀ-ում այդ լիազորություններով օժտված է օմբուդսմենը՝ մարդու իրավունքների պաշտպանը: Ի դեպ, պաշտպանն ունի միայն խախտումը թույլ տված մարմնին խախտումը վերացնելու մասին առաջարկությամբ կամ միջնորդությամբ հանդես գալու լիազորություն: Այս առաջարկությունը, սակայն, չունի պարտադիր բնույթ:

3. Եվ վերջապես, բողոքարկման ավանդական և իրավական առումով հուսալի ու որոշիչ ձևը՝ դատական պաշտպանությունն է:

Ըստ Սահմանադրության՝ մարդիկ ունեն իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք, հետևաբար դատարան կարող էր դիմել առանց պաշտպանության առաջին երկու ձևերին դիմելու:

Գ.3 Պատասխանատվությունը տեղեկություն ստանալու իրավունքը խախտելու, անձնական ու ընտանեկան գաղտնիքը հրապարակելու դեպքերում

Ի՞նչ պատասխանատվություն է կրում տեղեկատվություն տնօրինողը տեղեկություն ստանալու իրավունքը խախտելու համար:

- ««Լարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնյաների կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակում պատժելի է նաև քրեաիրավական դաշտում:

- Համաձայն ՀՀ Քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածի՝

Անձին՝ անմիջականորեն նրա իրավունքներն ու օրինական շահերը շոշափող և սահմանված կարգով հավաքված փաստաթղթերը կամ նյութերը ներկայացնելուց պաշտոնատար անձի կողմից ապօրինի հրաժարվելը կամ անձին այդպիսի տեղեկությունը ոչ լրիվ կամ դիտավորյալ աղավաղված ներկայացնելը, եթե դա տվյալ անձի իրավունքներին և օրինական շահերին վնաս է պատճառել՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

- ՀՀ Քրեական օրենսգրքի 144-րդ, 145-րդ և 146-րդ հոդվածները ապահովում են անձնական, բժշկական և նամակագրական տեղեկությունների պաշտպանվածության հիմքերը.

ա) Մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն առանց նրա համաձայնության օգտագործելը կամ հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ լրատվության միջոցներով այդպիսի տեղեկություններ տարածելը կամ հավաքելը կամ պահելը, եթե դրանք նախա-

տեսված չեն օրենքով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

- բ)** Առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց կողմից անձի հիվանդության կամ բժշկական ստուգման արդյունքների մասին տեղեկություններ հրապարակելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

Նշված գործողությունները, որոնք անգգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ՝ պատժվում են ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

- գ)** Քաղաքացիների մամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունն ապօրինի խախտելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

Նույն արարքը, որը կատարվել է պաշտոնական դիրքն օգտագործելով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

Տեղեկատվության ազատության հեռանկարները՝ երիտասարդության կրթության և աշխատանքային հարաբերություններում

Մինչ օրս, երիտասարդության խնդիրների կարգավորման ռազմավարական ուղղությունները սահմանող միակ փաստաթուղթը ՀՀ կառավարության 1998թ. դեկտեմբերի 14-ի N 798 որոշմամբ հաստատված «Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգն» է: Մակայն որպես երիտասարդական քաղաքականության իրավական կարգավորման շոշափելի քայլ, այսօր ՀՀ կառավարության նախաձեռնությամբ շրջանառության մեջ է գտնվում «Պետական երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի նախագիծը: Համաձայն օրինագծի՝ երիտասարդ է համարվում 18-30 տարեկայն յուրաքանչյուր անձ, որին ուղղված պետական քաղաքականության սկզբունքներից են նաև՝

- հրապարակայնություն,
- կրթության, հոգեւոր և ֆիզիկական զարգացման, առողջության պահպանման, քաղաքացիական և ռազմահայրենասիրական դաստիարակության, մասնագիտական պատրաստման և աշխատանքի տեղավորման իրավունքների ու երաշխիքների ապահովում,
- երիտասարդության զբաղվածության և աշխատանքի տեղավորման բնագավառում երաշխիքների ապահովում,
- երիտասարդ մասնագետներին աշխատանքով ապահովման աջակցություն,
- երիտասարդների համար ինքնազարգացման և ինքնադրսևորման պայմանների ապահովում,
- աջակցություն երիտասարդների շրջանում ձեռնարկատիրության զարգացմանը,
- պետական երիտասարդական քաղաքականության իրականացմանն ուղղված ծրագրերի նկատմամբ մոնիտորինգի ապահովում,
- երիտասարդական հիմնախնդիրների ուսումնասիրություն, վիճակագրական տվյալների հաշվառում:

Համաձայն օրինագծի 18-րդ հոդվածի՝ ՀՀ կառավարությունը

- սահմանում է երիտասարդական կազմակերպություններին մրցութային եղանակով ֆինանսական, կազմակերպական, տեղեկատվական

աջակցության ցուցաբերման կարգը՝ հաշվի առնելով պետական երիտասարդական քաղաքականության նպատակների առաջնայնությունը և երիտասարդական կազմակերպությունների իրավահավասարությունը,

- սահմանում է շնորհալի երիտասարդների համար արգևատրումներ և խրախուսման այլ ձևեր, ինչպես նաև դրանց տրամադրման կարգը:

Օրինագծի 10-րդ հոդվածից հետևում է, որ մի շարք միջոցառումների արդյունքում բարելավվելու են աշխատանքային իրավունքի պայմանները, մասնավորապես՝

- տնտեսության վերակառուցման և նոր աշխատատեղերի ստեղծման, կադրերի ուսուցման և վերապատրաստման դասընթացների կազմակերպման, մասնագետների պատրաստման համակարգի կատարելագործման միջոցով,
- ձեռնարկատիրական գործունեությունը խթանող և նպատակային վարկավորման ու այլ մեխանիզմների կիրառման միջոցով,
- աշխատատեղերի ստեղծմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացման միջոցով՝ արտագաղթի կանխումը՝ ձեր կողմից կամ ձեզ համար նորարարական նախագծերի մշակմանն աջակցության միջոցով և այլն:

Ձեռնարկատիրական գործունեությունից բացի սահմանվել են նաև ստեղծագործական և մտավոր ներուժի վերարտադրության ապահովմանն ուղղությունը: Մասնավորապես՝

- երիտասարդ տաղանդների բացահայտման և խթանման աշխատանքները,
- շնորհալի երիտասարդներին համապատասխան կրթություն ապահովելը,
- երիտասարդների նորարարական (իննովացիոն), գիտահետազոտական գործունեության աջակցությունը
- միջազգային համագործակցության հնարավորությունների ապահովումը՝ հումանիտար, կրթական, դաստիարակչական, գիտատեխնիկական և այլ հարցերով միջազգային, տարածաշրջանային ծրագրերին մասնակցության, ինչպես նաև միջազգային երիտասարդական տուրիզմի զարգացում միջոցով

Եղե՛ք հետևողական և

- Օգտվե՛ք տեղեկատվության ազատության Ձե՛ր իրավունքից:
- Շարունակե՛ք բարձրացնել ձեր իրազեկվածության մակարդակը՝ հանուն ձեր և ձեր երեխայի առողջության և սոցիալական պաշտպանվածության:
- Օգտվե՛ք ձեր իրավունքներից, եղե՛ք ձեր իրավունքների տերը:

Հիշե՛ք՝

կրթական գործընթացը և աշխատանքային հարարերությունները կազմակերպվում են հրապարակայնության սկզբունքով:

